

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԲՈՐՈՒՅԱՆ ԱՐՍԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ**

**«ՎԻՇԱՊ» ՔԱՐԱԿՈԹՈՂՆԵՐԸ  
ԵՎ ԴՐԱՆՑ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ**

**Է.00.03 - «Հնագիտություն» մասնագիտությամբ  
պատմական գիտությունների դոկտորի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2024**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և  
ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**պ.գ.դ. Գարեգին Սահակի Թումանյան**

**ա.գ.դ. Հակոբ Երվանդի Սիմոնյան**

**պ.գ.դ. Համլետ Լենսերի Պետրոսյան**

Առաջատար կազմակերպություն՝

**Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. դեկտեմբերի  
19-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստի-  
տուտում գործող ԲԿԳԿ-ի 007 «Հնագիտության և ազգագրության» մաս-  
նագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազ-  
գագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. նոյեմբերի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝



**պ.գ.թ. Արսեն Էդուարդի Հարությունյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ներկայացվող ատենախոսությունը նվիրված է ժողովրդական միջավայրում «վիշապ» կոչված հուշարձանի և դրան առնչվող մշակութային համատեքստի քննությանը հնագիտական տվյալների լույսի ներքո: Այն ամփոփում է վերջին տասնամյակում իրականացված դաշտային, լաբորատոր և արխիվային աշխատանքների հիմնական արդյունքները:

**Թեմայի արդիականությունը.** «Վիշապ» քարակոթողները, լինելով Հայկական լեռնաշխարհի ամենաուշագրավ հնություններից մեկը, իրենց հայտնաբերման սկզբից՝ XIX-XX դդ. սահմանին, արժանացան մեծ ուշադրության: Բնությամբ նախ և առաջ հնագիտական արժեք լինելով՝ քարակոթողները, սակայն, գրավեցին մասնագետներին առավելապես արվեստի, առասպելաբանության, պաշտամունքի և ավելի սակավ՝ հնագիտության տեսանկյունից: Այսինքն՝ քարակոթողները գրեթե չքննարկվեցին իրենց հնագիտական համատեքստի և կենսամշակութային միջավայրի, հնագիտական հատկանիշների քանակական ու որակական վիճակագրության, ճշգրիտ տեղայնացման, կանոնավոր ցուցակագրման և քարտեզագրման առումներով: Հնագետների աշխատանքներում խոսքը հիմնականում արվեստաբանական տիպաբանության, պատմահամեմատական զուգահեռների (որոնց միջոցով՝ թվագրության) ու գործառույթի մասին էր, ինչն արվում էր քարակոթողներն ավելի ու ավելի ծանրաբեռնելով խորհրդաբանությամբ (ինչից, ի դեպ, դժվար է խուսափել): Այնուամենայնիվ, նախորդ հետազոտությունները ստեղծեցին այն էական նախադրյալները, որոնց հիման վրա ներկայումս կարելի է ավելի «հնագիտացնել» մեր գիտելիքը քննարկվող երևույթի մասին:

Այս նպատակով 2011 թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (Ա. Բորոխյան), Բեռլինի Բաց համալսարանի, ապա և Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի (Ա. Ջիլիբերտ, Պ. Հնիլա) միջև սկսվեց գիտական համագործակցություն, որի հիմնական խնդիրն էր հետազոտել «վիշապ» քարակոթող երևույթը ժամանակակից հնագիտության մեթոդներով: 2011-2023 թթ. դաշտային աշխատանքներն ընթացան երեք ուղղություններով՝ 1. հնագիտական հետախուզական աշխատանքներ Հայաստանի Հանրապետության տարածքում, 2. պեղումներ Արագածի հարավային բարձունքներում գտնվող Տիրինկատար նորահայտ հուշարձանում, 3. հնագիտական հետախուզական աշխատանքներ Բարձր Հայք, Տայք, Ջավախք, Թոեղք շրջաններում: Այս հետազոտության մեջ ներկայացվում են առաջին երկու կետերում նշված աշխատանքները Հայաստանի Հանրապետության տարածքում, թեև համեմատական կարգով օգտագործվում է քարակոթողների վերաբերյալ կուտակված ընդհանուր տվյալների շտեմարանը:

Քանի որ քարակոթողները գրեթե չեն ուսումնասիրվել զուտ հնագիտական գործիքակազմով, դրանց միջավայրում չեն իրականացվել կանոնավոր պե-

ղումներ և համապատասխան բնագիտական հետազոտություններ, ուստի քննարկվող թեման կարելի է համարել արդիական:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները.** Աշխատանքի նպատակն է միավորել նախկին և նոր տվյալները՝ քարակոթողների երկույթը թվագրելու և մեկնելու համար: Այս տեսանկյունից վերջին տասնամյակում մեր արշավախումբն իրականացրել է քարակոթողների փաստագրման լայնածավալ աշխատանք, որի շնորհիվ ստուգվել և ճշտվել են մասնագիտական գրականության մեջ, արխիվային նյութերում և հուշարձանների ցանկերում առկա տվյալները, իրականացվել են դաշտային հետախուզական աշխատանքներ՝ նոր քարակոթողներ հայտնաբերելու հավանականությունը փորձելու նպատակով, նկարագրվել և տիպաբանվել են բոլոր առկա քարակոթողներն ըստ իրենց ձևաբանական ու տարածական առանձնահատկությունների, իրականացվել են հնագիտական պեղումներ Արագածի հարավային բարձունքներում գտնվող Տիրինկատար նորահայտ հուշարձանում: Այս ամենի արդյունքում խնդիր է դրվել ստեղծել քարակոթողների վերաբերյալ տվյալների ամբողջական շտեմարան և մեկնել այդ արձանների գործառության Նշանակությունը:

**Ուսումնասիրության ժամանակագրական և աշխարհագրական սահմանները.** «Վիշապ» քարակոթողները և դրանց վերաբերող հնագիտական համատեքստերը թվագրվում են հիմնականում միջին և ուշ բրոնզի դարերով (Ք.ա. մոտ XXII-XIII դդ.): Սակայն հավանական է, որ այդ քարակոթողների ակունքները հասնում են նոր քարի և պղնձի դար, երբ բարձրլեռնային գոտիներն առաջին անգամ յուրացնում են մարդկային համայնքները (Ք.ա. VI հազ. վերջ - V հազ. երկրորդ կես): Արձանների զգեստնումը սկսվել է վաղ երկաթի դարում (Ք.ա. մոտ XII-IX դդ.), որից հետո շարունակվել են դրանց վերիմաստավորումն ու կերպավորումը:

Ինչ վերաբերում է աշխարհագրական սահմաններին, Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը և մասնավորապես Արագած, Արեգունի, Գեղամա, Եղնախաղի, Ծաղկունյաց, Կենաց, Սևանի, Սյունիքի, Վարդենիսի լեռները այս աշխատանքի հիմնական թիրախն են:

**Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը.** Քարակոթողների մասին տվյալներ հայտնի են առնվազն XVII դ. ի վեր, սակայն դրանց առաջին գիտական հետազոտությունը սկսվում է XX դ. սկզբին և ակտիվանում հատկապես նույն դարի 20-ական թթ.: Սրանից հետո առանձին տեղեկություններ են շրջանառվել քարակոթողների վերաբերյալ՝ մինչ վերջին տարիների հիմնարար հետազոտությունները:

**Ատենախոսության փորձաքննությունը.** Ատենախոսությունը քննարկել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժինը: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հինգ տասնյակ ուսումնասիրություններում, հետազոտության արդյունքները զեկուցում-

ներով ներկայացվել և քննարկվել են հանրապետական և միջազգային գիտա-  
ժողովներում:

**Ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը.** «Վիշապ» քարակոթող  
երևույթը հետազոտում են մի քանի տեսակի սկզբնաղբյուրների միջոցով՝ հնագի-  
տական, բնագիտական, հասարակագիտական: Ներկա աշխատանքը հենվում է  
հիմնականում առաջին երկուսի վրա:

Աշխատանքում օգտագործվել են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմա-  
ներեն, ֆրանսերեն, թուրքերեն ուսումնասիրություններ, ինչպես նաև քարակո-  
թողները հետազոտած մասնագետների (Ն. Մառ, Յ. Սմիռնով, Ա. Քալանթար,  
Ատրպետ, Լ. Բարսեղյան, Է. Խանզադյան և այլք) արխիվային նյութեր:

**Հետազոտության մեթոդաբանական հիմքը.** Միջգիտակարգային հե-  
տազոտության կիրառմամբ՝ աշխատանքում փորձ է արվում քարակոթողները  
ներկայացնել ժամանակակից հնագիտության մեթոդաբանական գործիքակազ-  
մով: Ստեղծված տվյալների շտեմարանի հիման վրա, հաշվի առնելով խնդրի  
ուսումնասիրության պատմությունը և նորագույն դաշտային հետազոտություն-  
ների արդյունքները, քննարկվում են քարակոթողների տարածման առանձնա-  
հատկությունները, դրանց հնագիտական համատեքստը, գործառույթի և հասար-  
ակական նշանակության հետ կապված խնդիրները, կերպափոխման երկարա-  
տև ընթացքը: Այս տեսանկյունից կարևորվում է ոչ թե կամ ավելի շուտ՝ ոչ միայն  
հուշարձանն ինքը, այլ գլխավորապես դրա հնագիտական և սոցիալ-մշակութա-  
յին համատեքստը:

Հետազոտության ընթացքում առաջնորդվել ենք սկզբնաղբյուրների հա-  
մադրման, համակողմանի և քննական վերլուծության սկզբունքով՝ հավանական  
համարելով այն տեսակետը, որի օգտին են խոսում մեկից ավել փաստեր:

**Աշխատանքի գիտական նորոյթն ու գործնական նշանակությունը.**  
Իրականացված աշխատանքի արդյունքում տեղեկություններ են հավաքվել ընդ-  
հանուր առմամբ 115 քարակոթողների մասին, որոնք բոլորը փաստագրվել են  
տեղում. կազմվել է տվյալների մանրամասն շտեմարան, որը ներառում է յուրա-  
քանչյուր քարակոթողի անհատական պատմությունը: Ընդ որում, հիշյալ քարա-  
կոթողներից 59-ն առաջին ազամ են դրվում շրջանառության մեջ:

Հետախուզական աշխատանքի ընթացքում, ծ.մ. մոտ 3000 մ բարձրու-  
թյան վրա, հայտնաբերվել է Տիրինկատար հուշարձանախումբը, որտեղ, 40 հա  
մակերես ունեցող սարահարթում, իրականացվել են 12 քարակոթողների և այլ  
հուշարձանների հետազոտություն ու պեղումներ:

Նոր տեղեկություններ են ձեռք բերվել արձանների տեսակների, հնագի-  
տական համատեքստի, դիրքի, թվագրության և գործառույթի վերաբերյալ:

Վերջին տարիների հնագիտական աշխատանքներին զուգահեռ՝ փորձ է  
կատարվել բարձրացնել քարակոթողների մասին հասարակական ճանաչողու-  
թյան մակարդակը թե՛ Հայաստանում, թե՛ երկրի սահմաններից դուրս: Ճշտվել  
են բոլոր տեղափոխված քարակոթողների նախնական տեղադրության վայրե-  
րը, բետոնե հիմքի մեջ գլխավայր դրված քարակոթողները բետոնից հանվել,

փաստագրվել և վերադրվել են ճիշտ ուղղությամբ: Բացվել են տեղական և միջազգային ցուցահանդեսներ: Տիրինկատար հուշարձանն ու «Վիշապ» քարակոթող երևույթը ներկայացվել են՝ Յունեսկոյի անշարժ հուշարձանների ցանկում ներառելու նպատակով:

**Աշխատանքի կառուցվածքը.** Աշխատանքը բաղկացած է բուն ատենախոսությունից և վեց հավելվածներից: Բուն ատենախոսության տեքստը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, գրականության և արխիվային նյութերի ցանկից: Հավելվածները կազմված են 1. Տեքստային շտեմարանից, 2. աղյուսակներից, 3. գծանկարներից, 4. լուսանկարներից, 5. տեղագրական հանույթներից և 6. քարտեզներից:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ**

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

### **ԳԼՈՒԽ I**

### **ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

Յուրաքանչյուր գիտական աշխատանքի կարևոր խնդիրն է սահմանել հետազոտության առարկան, դրա յուրահատուկ հատկանիշները, անդրադառնալ օգտագործված սկզբնաղբյուրներին և մեթոդաբանությանը, հստակեցնել հղման համակարգի առանձնահատկությունները, ներկայացնել քանակական տվյալների շտեմարանի կառուցվածքը, որի հիման վրա արվում են որակական հետևությունները: Հիշյալ հարցադրումներին նվիրված ատենախոսության առաջին գլուխը բաղկացած է հինգ ենթագլուխներից՝ 1. «Վիշապ» քարակոթողի սահմանումը, 2. Սկզբնաղբյուրները, 3. Մեթոդաբանությունը, 4. Մանրատեղանունների խնդիրը, 5. Քարակոթողների հղման համակարգը:

Առաջին հարցը, որին բախվում ենք քարակոթողների խնդիրը քննարկելիս, այն է, թե որ կատեգորիայի մեջ է հնարավոր դիտարկել այդ հուշարձանը. արդյո՞ք «Վիշապ» քարակոթողները արձաններ են, մեգալիթներ, թե՞ հուշարձանի մեկ այլ տեսակ: Քարակոթողների հայտնաբերման սկզբնական շրջանում՝ 1910-ական թթ., Ն. Մառն ու Յ. Սմիռնովը դրանք դիտում էին որպես յուրահատուկ արձաններ: 1920-ական թթ., Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի ակտիվ աշխատանքների արդյունքում, քարակոթողները սկսեցին քննարկվել որպես մեգալիթյան հուշարձանի տարատեսակ:

Գրականության մեջ բոլոր կանգուն քարերը, որոնք մշակված են կոպտորեն, և որոնց ուղղահայաց չափերը էապես գերակշռում են հորիզոնական չափերին, սովորաբար անվանում են «մենհիր» (բրետ. երկար քար), իսկ այն քարերը, որոնք մշակված են նրբորեն, հստակ համաչափությունների պահպանմամբ՝ «քարակոթող»: Եթե առաջինը բնորոշ է նախապատմական՝ գիր չունեցող, ապա երկրորդը՝ առավելապես պատմական փուլը թևակոխած հասարակություններին: Արձանը՝ որպես ավելի բարդ պատկերագրությամբ օժտված քանդակ, զարգանում է քարակոթողից: Ինչպես մենհիրի, այնպես էլ քարակոթողի պարագայում ընդհանուր սահմանումները բացակայում են կամ ավելի շուտ՝ տատանվում են ըստ տարածաշրջանային առանձնահատկությունների: Այս իմաստով, յուրաքանչյուր մշակութային գոտի կարող է ունենալ կանգուն քարերի իր տեսականին, ինչը բխում է տվյալ տարածքում ապրող ժողովրդի կամ ժողովուրդների պատմական զարգացման առանձնահատկություններից և աշխարհայացքից:

Ելնելով առկա տվյալներից՝ մեր նյութի հիման վրա առաջարկում ենք մենաքարերի դասակարգման մի տարբերակ, որը հենվում է մշակվածություն – ձև/կտրվածք – նյութ – պատկեր/արձանագրություն – լանդշաֆտ հատկանիշների վրա: Այս դասակարգման մեջ քարակոթողներն ունեն իրենց յուրահատուկ տեղը. մասնավորապես, դրանք բոլոր կողմերում մշակված և կենդանակերպ պատկերագրությամբ օժտված, հիմնականում դեպի վար նեղացող մոնոլիթ, կլոր քանդակներ են, որոնք ունեն մոտ 110-550 սմ բարձրություն, պատրաստված են կարծր հրաբխային քարից՝ գլխավորապես անդեզիտաբազալտներից:

Քարակոթողները դիտարկելի են մեգալիթյան մշակույթների համակարգում՝ զուտ մեծաքարային և մոնոլիթ լինելու, ինչպես նաև նախագրային շրջանին վերաբերելու պատճառով: Սակայն իրենց մշակմամբ, պատկերագրությամբ, խորհրդաբանությամբ և հասարակական նշանակությամբ՝ որպես քանակով սահմանափակ, տարածքով սահմանված և ինքնություն ստեղծող ուղեհիշներ՝ դրանք ակնհայտ քարակոթող-արձաններ են: Քարակոթողներից ոչ մեկը մյուսին չի կրկնում, բայց դրանք կրում են ձևաբանական և պատկերագրական ընդհանուր հատկանիշներ, որոնց հիման վրա հնարավոր է դառնում սահմանել այդ քարակոթողների տիպաբանությունը:

Քարակոթողները պայմանականորեն բաժանում ենք երեք տիպի՝ 1. ցլակերպ (քառակող, հաստ սալաքարի տեսքով, վերից վար նեղացող, դիմային մասում հիմնականում ցլի գլխի և վար ընկած վերջույթների պատկերով), 2. ձկնակերպ (կտրվածքում կլորավուն, քանդակված ձկան տեսքով՝ կրելով ձկան անատոմիական մանրամասներ), 3. ձկնացլակերպ (կրում է նախորդ երկուսի հատկանիշները՝ ձևով նմանվելով ձկան, բայց պատկերագրության մեջ կրելով նաև ցլային հատկանիշներ): Չենք բացառում, որ որոշ քարակոթողներ կարող էին պատկերել խոյ կամ կով, հետևապես ցլակերպի ավելի ճիշտ անվանում կարող էր լինել «կնդակավոր»-ը: Հնարավոր է նաև, որ գոյություն են ունեցել անզարդ քարակոթողներ, որոնք կլոր քանդակներ են, սակայն չունեն պատկերագրություն. այս օրինակները կարող են ներկայացնել չորրորդ տիպը՝ թերևս թվա-

գրվելով ավելի վաղ, քան դասական օրինակները: Ըստ մեր տվյալների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հանդիպում են 82 ցլակերպ, 29 ձկնակերպ և 4 ձկնացլակերպ քարակոթողներ:

2011-2023 թթ. իրականացված դաշտային աշխատանքները, ինչպես նաև հրապարակված և արխիվային նյութերը կազմում են այս աշխատանքի հնագիտական սկզբնաղբյուրների հենքը: Դաշտային աշխատանքներն իրականացվել են ինտենսիվ և էքստենսիվ հետախուզումների ձևով տարբեր «վիշապ» քարակոթողներին բնորոշ միջավայրերում և պեղումների միջոցով մեկ հնավայրում՝ Տիրինկատարում: Պեղումների ընթացքում արվել են նաև բնագիտական (երկրաֆիզիկական, երկրաքիմիական, հողի մանրէաբանական, հնաբուսաբանական, հնակենդանաբանական, վանակատի, ծաղկափոշու, կայուն իզոտոպների, հնագենետիկական, ռադիոածխածնային) հետազոտություններ, որոնց նպատակն է եղել մարդկային գործունեության հետքերի հայտնաբերումը, գտածոների թվագրումը, բնական միջավայրի ու կլիմայական պայմանների, ինչպես նաև փոխանակման համակարգերի ուսումնասիրությունը:

Քարակոթողների հետազոտությունը երբեք աչքի չի ընկել մեթոդաբանական հստակ սկզբունքների կիրառմամբ: Հայտնաբերման օրվանից ի վեր քարակոթողների մեկնություններում գլխավորապես կիրառվել են հասարակագիտական տեղեկություններ, որոնք հանգեցրել են պատմաառասպելական և լեգվական ոճի գերմեկնությունների: Չեն ստեղծվել տվյալների շտեմարաններ՝ դրանցից բխող իրական հետևություններով: Այնուամենայնիվ, 1920-ական թթ. հայ հետազոտողները, մասնավորապես Ա. Քալանթարը, էապես մոտեցել են քարակոթողների՝ հնագիտական մեթոդներով ուսումնասիրմանը:

Այս աշխատանքում փորձ է արվում «վիշապ» քարակոթող երևույթը ներկայացնել ժամանակակից հնագիտության մեթոդաբանական գործիքակազմով: Ստեղծված տվյալների շտեմարանի հիման վրա, հաշվի առնելով խնդրի ուսումնասիրության պատմությունը և նորագույն դաշտային հետազոտությունների արդյունքները, քննարկվում են քարակոթողների տարածման և կենսատարածքի կազմակերպման առանձնահատկությունները, դրանց հնագիտական համատեքստը, գործառույթը և հասարակական նշանակությունը, թվագրությունն ու կերպափոխման տևական ընթացքը: Այս տեսանկյունից կարևորվում է ոչ միայն հուշարձանն ինքը, այլ նաև՝ դրա հնագիտական և սոցիալ-մշակութային համատեքստը:

Տեղադրված լինելով հիմնականում բարձրլեռնային գոտիներում՝ քարակոթողներն ունեն հետազոտման իրենց առանձնահատկությունները: Դրանցից կարևոր է մանրատեղանումների քննարկումը՝ քարակոթողների փոփոխվող անվանաբանությունը և ինքնությունը պարզելու նպատակով: Այս և այլ մանրամասներ հաշվի առնելով՝ աշխատանքում առաջարկվում է քարակոթողների նկարագրման և հղման միասնական համակարգ:



## ԳԼՈՒԽ II ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Եթե հաշվի չառնենք միջնադարյան հայ պատմիչների վկայությունները վիշապների և համապատասխան բարձրլեռնային միջավայրերի մասին, ապա բուն «վիշապ» քարակոթողների վերաբերյալ հիշատակություններ ունենք սկսած XVII դ.: Առկա հրապարակումների և արխիվային նյութերի տվյալների հիման վրա՝ առաջարկում ենք քարակոթողների ուսումնասիրության պատմությունը բաժանել հինգ հիմնական փուլերի: Համապատասխանաբար ստենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է հինգ ենթագլխից՝ 1. 1600-1908 թթ. հիշատակությունները, 2. 1909-1912 թթ. հետազոտությունները, 3. 1913-1920 թթ. հետազոտությունները, 4. 1921-1939 թթ. հետազոտությունները, 5. 1940-2010 թթ. հետազոտությունները:

Ուշ միջնադարյան հեղինակները (օրինակ՝ XVII-XVIII դդ. ապրած Քյաթիբ Չելեբին, Վախուշտի Բագրատիոնին) հիշատակում են որոշ առանձին քարակոթողներ: XIX դ. ավելի հաճախակի են դառնում համապատասխան վկայությունները. մասնավորապես, Ա. Երիցյանը հայ իրականության մեջ առաջին հնագետն է, որը խոսում է մեգալիթյան հուշարձանների, այդ թվում՝ մեզ հետաքրքրող քարակոթողների մասին: Սակայն հիշյալ և այլ հեղինակներ այդ հուշարձանը չեն սահմանում որպես այդպիսին: XX դ. սկզբին վանեցի տեղագիր Խ. Լևոնյանը Եղերով լեռան ստորոտին հիշատակում է քարակոթող, որը տեղացիները «վիշապաքար» են անվանում: Սա համապատասխան բառի և քարակոթողի ամենահին վկայություններից է, եթե ոչ ամենահինը: Նույն ժամանակահատվածում գրող Ատրպետն իր տպագիր և անտիպ աշխատանքներում հիշատակում է 32 միավոր քարակոթող Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում, թեև դրանց հենց «վիշապ» քարակոթող լինելու մասին տեղեկանում է միայն Ն. Մառի և Յ. Սմիռնովի կարևոր հետազոտություններից հետո:

Մասնավորապես 1909-1912 թթ. ընթացքում վերջիններս Գեղամա լեռներում փաստագրեցին իրենց սկզբնական տեղում գտնվող 23 քարակոթող՝ բացելով այդ քարակոթողների գիտական հետազոտության էջը:

Ն. Մառի աշակերտներից Գ. Ղափանցյանը 1912 թ. Արագածի վրա հայտնաբերեց և մեկ քարակոթող (Ձովունու սար 1):

Ն. Մառի և Յ. Սմիռնովի հայտնագործություններից հետո քարակոթողների մասին անդրադարձը վերաբերում է Լ. Լիսիցյանին, որը 1913 թ., Թ. Թորամանյանի և Յ. Սորժիգովիկու համատեղ աշխատանքի ընթացքում, փաստագրում է Գեղարդա լճի մի քանի արդեն հայտնի քարակոթող (Գեղարդա լիճ 1, 2, 3):

Քարակոթողների հետազոտությունը ակտիվացավ 1920-ական թթ.: Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի հուշարձանների ցուցակագրումները և հիմնարար նախաձեռնությունները հիմք դարձան քարակոթողներ

րի մասին կոմիտեի հատուկ ծրագրի ստեղծման համար, որը կապվում էր ոռոգման համակարգի հետազոտության հետ՝ կոչվելով «Ջրի կուլտը հին Հայաստանում և «վիշապների» պրոբլեմը»: Կոմիտեի արշավախմբի կազմում 1924-1927 թթ. ընթացքում Ա. Քալանթարը Արագածի վրա հայտնաբերել է չորս նոր քարակոթող (Կոտուրի սար 1, Քարակապ 1, 2, 3): Բացի այդ, Ա. Քալանթարը հիշատակում է մեկ քարակոթող, որը թերևս տեսել է, բայց չի հայտնաբերել անձամբ, ու ևս չորսը, որոնք չի տեսել, բայց լսել է դրանց մասին: Ա. Քալանթարի արշավախումբը հինգ քարակոթող է փաստագրում նաև Արտանիշի ծովածոցի մոտ:

Հնությունների պահպանության կոմիտեի ակտիվ աշխատանքներից հետո քարակոթողների հետազոտությունը դարձավ խիստ անկանոն, եթե չհաշվենք 1960-ական թթ. մասնակի վերածնունդը: Քարակոթողների հետազոտության աշխուժացումը 1960-ական թթ., կարծում ենք, կապված էր Գառնի 1-ի հայտնագործման հետ 1963 թ., Գառնիի պեղումների ընթացքում՝ Բ.հ. III դ. պալատական համալիրի հիմքում (Բ. Առաքելյան): Քարակոթողի վրա հետազայում արվել էր սեպագիր արձանագրություն, ինչը ճշտումներ մտցրեց դրա թվագրության հարցում: Նույն 1963 թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը արշավախումբ է գործուղում Գեղամա լեռներ՝ քարակոթողները հետազոտելու նպատակով, որի կազմում էին Լ. Բարսեղյանը, Ժ. Խաչատրյանը և Ա. Քալանթարյանը: Արշավախումբը հայտնաբերում է մեկ նոր քարակոթող (Գեղարդա լիճ 5):

1960-ական թթ. հետո քարակոթողների ուսումնասիրությունը դարձավ դիպվածային: Ա. Շահինյանը, Օ. Խնկիկյանը և հուշարձանապահպան մարմինները հիշատակում են անկոնտեքստ և վերաօգտագործված քարակոթողներ, որոնց մի մասը (Աղավնաձորի սար 1-2, Կարմրաշեն 1, Մաղինայի սար 1, Վարդենյաց 1) հրապարակվում է գիտական մամուլում, իսկ մյուս մասը (Դաշտադեմի սար 1, 2, Սառնաղբյուր 1, Սասնաշենի սար 1, Ոսկեթաս 1, Գայլաբլուր 1, Գողթի սար 1, Գեղաշեն 1, Բուժական 1, Սոթք 1) չի հրապարակվում, թեև տեղ է գտնում հուշարձանների պետական ցանկերում: Այս ժամանակահատվածի համար կարևոր են հատկապես Է. Խանզադյանի հետազոտությունները. նա հավաքագրում է տվյալներ քարակոթողների վերաբերյալ, բայց հասցնում է հրատարակել միայն մի քանի հոդված: Առկա արխիվային նյութի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Է. Խանզադյանը տեղյակ է եղել Հայաստանի ու Վրաստանի տարածքում գտնվող մոտ 50 քարակոթողների մասին, որոնցից մեկը հայտնաբերել է ինքն անձամբ (Լճաշեն 1), երկուսը՝ հավանաբար ինքը (Գեղասար 1, 2):

## ԳԼՈՒԽ III ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր արշավախմբի հնագիտական աշխատանքները 2011-2023 թթ. ընթացել են երկու ուղղությամբ՝ հետախուզական ուղերթեր և պեղումներ: Հետախուզական աշխատանքներն իրականացվել են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում (Արագած, Արեգունի, Գեղամա, Եղնախաղի, Ծաղկունյաց, Կենաց, Սևանի, Սյունիքի, Վարդենիսի լեռներ): Հնագիտական պեղումներն արվել են Արագածի հարավային բարձունքներում գտնվող Տիրինկատար հուշարձանախմբում, որը հայտնաբերվել է 2012 թ.: Տիրինկատարն ընտրվել է որպես հետազոտության հիմնական թիրախ՝ ելնելով դրա կենտրոնական տեղադիրքից, քարակոթողների՝ մինչ օրս հայտնի ամենամեծ կուտակում ներկայացնելու և Արագածի վրա «վիշապ» քարակոթողների ամենաբարձր կետը լինելու հանգամանքից: Թվարկված խնդիրներին նվիրված երրորդ գլուխը բաղկացած է համապատասխան հինգ ենթագլուխներից՝ 1. 2011-2023 թթ. հետախուզական աշխատանքները, 2. Տիրինկատար հնավայրի հայտնագործումը, 3. Տիրինկատարի բնապատմական միջավայրը, 4. Տիրինկատարի հնագիտական պեղումները, 5. Հետազոտությունների հիմնական արդյունքը:

Մասնավորապես, հետախուզական աշխատանքները նպատակ ունենին՝ 1. ստուգել գրականության մեջ, արխիվային նյութերում և հուշարձանների պետական ցանկերում առկա տվյալները քարակոթողների վերաբերյալ՝ սահմանելով դրանց հավաստիությունը, 2. ճշտել տեղափոխված օրինակների գտնվելու նախնական վայրերը, 3. փորձել վերականգնել տվյալներ քարակոթողների պատրաստման գործընթացի մասին, 4. փորձել նոր քարակոթողներ հայտնաբերելու հավանականությունը, 5. նկարագրել և տիպաբանել բոլոր առկա քարակոթողներն ըստ իրենց ձևաբանական ու տարածական առանձնահատկությունների՝ հիմքեր ստեղծելով երևույթն արդի հնագիտական գործիքակազմով վերլուծելու համար: Այդ տվյալների հիման վրա իրականացվել է քարակոթողների նոր տիպաբանություն:

Թեև ոչ մի քարակոթող մյուսին ուղղակիորեն չի կրկնում, սակայն, ըստ ընդհանուր ձևաբանական և պատկերագրական սկզբունքների, քարակոթողները ենթարկվում են որոշակի օրինաչափությունների: Առաջարկվող տիպաբանությունն իրականացվում է ըստ քարակոթողի՝ 1. պատկերի, 2. պատկերի քանդակման եղանակի, 3. մշակման ոճի, 4. ձևի, 5. պրոֆիլի, 6. չափի:

Ըստ պատկերի՝ քարակոթողները բաժանում ենք հետևյալ տիպերի՝ 1. ցլակերպ՝ 8 ենթատիպերով, 2. ձկնակերպ՝ 5 ենթատիպերով, 3. ձկնացլակերպ՝ 1 ենթատիպով (4. առանց պատկերի քարակոթողներ՝ 2 ենթատիպով): Բոլոր տիպերի մեջ գերիշխում է ցլակերպերի առաջին ենթատիպը, որի դիմային հատվածում պատկերված է ցլի գլուխ՝ բերանից դուրս եկող հեղուկի շիթերով/լեզվով և առջևի վերջույթներով. որպես կանոն՝ ականջների միջև առկա է «թագ», որն

իրականում մարմնի/մորթու սկզբնամասն է խորհրդանշում, իսկ հետնային և կողային պատկերները բացակայում են:

Ըստ պատկերի քանդակման եղանակի՝ քարակոթողները բաժանում ենք չորս ենթատիպի՝ 1. ռելիեֆ՝ ուռուցիկ ցածր (հարթաքանդակ, երբ ուռուցիկ պատկերն իր ծավալի կեսից ավելին դուրս ցցված չէ ֆոնի հարթությունից), 2. ռելիեֆ՝ ուռուցիկ բարձր (բարձրաքանդակ, երբ ուռուցիկ պատկերն իր ծավալի կեսից ավելին դուրս է ցցված ֆոնի հարթությունից), 3. ռելիեֆ՝ ուռուցիկ ցածր (հարթաքանդակ)՝ քարակոթողի բոլոր հատվածները, բացի գլխից, և ռելիեֆ՝ ուռուցիկ բարձր (բարձրաքանդակ)՝ միայն քարակոթողի գլխամասը, 4. ներգծում, երբ ռելիեֆը կարծես ներգծման միջոցով է ստեղծվում: Գերիշխում է առաջին ենթատիպը՝ հարթաքանդակը:

Ըստ մշակման ոճի՝ քարակոթողները տեսանելի են մեկ ենթատիպի մեջ՝ 1. մշակված է բոլոր կողմերից որպես կլոր քանդակ, բացի ստորին հատվածից:

Ըստ ձևի՝ քարակոթողները բաժանում ենք հինգ ենթատիպի՝ 1. վերին հատվածում լայն, ստորին հատվածում նեղ, 2. վերին հատվածում նեղ, ստորին հատվածում լայն, 3. ուղիղ՝ կորացող կողմերով, 4. ուղիղ՝ վերին հատվածում կլորացող, 5. ուղիղ՝ դեպի ներս կորացող կողմերով: Գերիշխում է առաջին ենթատիպը՝ վերին հատվածում լայն, ստորին հատվածում նեղ:

Ըստ պրոֆիլի կազմության՝ քարակոթողները բաժանում ենք վեց ենթատիպի՝ 1. կորացող (միակողմանի), 2. կորացող (երկկողմանի), 3. ուղիղ, 4. ուղիղ՝ վերին հատվածում կորացող, 5. ուղիղ՝ վերին հատվածում լայնացող, 6. ուղիղ՝ վերին հատվածում նեղացող: Գերիշխում է երկրորդ ենթատիպը՝ երկկողմանի կորացող:

Ըստ չափի (երկարության)՝ քարակոթողները բաժանում ենք հինգ ենթատիպի՝ 1. 100-200 սմ, 2. 200-300 սմ, 3. 300-400 սմ, 4. 400-500 սմ, 5. 500-600 սմ: Գերիշխում է երրորդ ենթատիպը՝ 300-400 սմ օրինակները:

Քարակոթողների երեք տիպերն ունեն ձևի, պատկերի և ոճի այնպիսի ընդհանուր հատկանիշներ, որոնք հնարավորություն են տալիս դրանք դիտարկել որպես միասնական երևույթ: Քարակոթողի կարևորագույն առանձնահատկությունը պատկերն է, որի ձևավորումը դրա տարբեր հատվածներում սահմանում է այն որպես արձան, ընդ որում՝ յուրահատուկ արձան, որի զուգահեռները գրեթե բացակայում են:

Քարակոթողների ձևավորման համար կիրառվում է կենդանական զուսպ և մինիմալիստական ոճ՝ հիմնված խոշոր եղջերավորների և ձկների ոչ լիակատար համաչափ պատկերների վերարտադրության վրա: Առկա են նաև զույգ թռչունների առանձին քանդակներ (Գեղարդա լիճ 1, Սախուրակ 5, Վանստան 1, Տիրինկատար 9): Հավանական է, որ որոշ դեպքերում գործ ունենք գորտային/երկկենցաղ կենդանիների պատկերների հետ (Մաղալներ 1, Վիշապասար 2, Տիրինկատար 10, Արշալույսի սար 3): Մի դեպքում առկա է օձի և այծի (Հարփու 1), մեկ այլ դեպքում՝ անհասկանալի/ոչ իրական կենդանական էակի (Գեղարդա լիճ 6) պատկեր:

Կենդանու շղարշի տակ, սակայն, հաճախ թաքնված է այդ քանդակը ստեղծող մարդու պատկերը: Այսպես, երբեմն հանդիպում են կենդանիներին ոչ բնորոշ մարմնի մասեր՝ քիթ (Այգեշատ 1, Գեղարդա լիճ 3, Տիրինկատար 10), ունք (Գեղարդա լիճ 5, Վիշապասար 2), քիթ և ունք (Սախուրակ 2), ականջ, քիթ և ունք (Տիրինկատար 6): Հաճախ արձանը հայում է ուղիղ՝ մարդկային հայացքով (Լճառոտ 3, Գեղաշեն 1, Հարժիս 2, Գեղարդա լիճ 3, 4, Սախուրակ 6): Երբեմն հայացքը խորաթափանց է այնքան, որ թվում է՝ հայողի աչքերը փակ են (Տիրինկատար 9):

Քարակոթողների քանդակների մեջ քիչ քանակությամբ առկա են նաև առարկայական պատկերներ՝ նետասլաք (Գեղարդա լիճ 1), պարույրներ (Բուժական 1, Սոթք 1), դուրս ելնող վերջույթներով շրջան, արևային նշան (Քարակապ 5, Դաշտադեմի սար 2), անոթ, պատվանդան և կենաց ծառ (Վանստան 1):

Նշմարվում են քարակոթողների կերտման կենտրոնական (Արագած և Գեղամա լեռներ) ու մարգինալ (Արեգունի, Եղնախաղի, Ծաղկունյաց, Կենաց, Սևանի, Սյունիքի լեռներ) ոճեր: Կարելի է առանձնացնել նաև միջանկյալ ոճ (Վարդենիսի լեռներ): Ընդ որում, եթե կենտրոնական ոճն աչքի է ընկնում նրբագեղությամբ, համաչափությամբ, կանոնիկությամբ (Տիրինկատար 1-12, Քարակապ 1-5, Սախուրակ 1-6, Գեղարդա լիճ 1-8, Վանստան 1-5), ապա մարգինալը՝ համեմատական պարզությամբ, համաչափության և կանոնիկության թույլ արտահայտչաձևերով (Հարժիս 1, Չիվա 1, Վարդենյաց 1, Արտանիշ 1-5, Բնունիս 1): Մինչդեռ միջանկյալ կրում է երկուսի առանձնահատկությունները (Աղավն-նաձորի սար 1-4, Մադինայի սար 1, Վարդենյաց 1):

Պատկերագրական տվյալները հնարավորություն են տալիս խոսելու նաև ոճերի մասնակի զարգացման մասին: Այսպես, առանց պատկերի, մասնակի կամ հազիվ նշմարվող պատկերով և տձև միջանկյալ ձևերի գոյության հանգամանքը (Քարակապ 2, Դաշտադեմի սար 2, Գեղասար 3, Վիշապասար 1, Ոսկեթաս 1) հնարավորություն է տալիս ենթադրելու արխաիկ շրջանի ոճի մասին: Մինչդեռ ֆալիկ գլխով մենիիր հիշեցնող (Եղնաջուր 1), օձ և այծ պատկերող (Հարժիս 1), մարդակերպության տարրերով բնորոշվող (Այգեշատ 1, Գեղարդա լիճ 3, Հարժիս 2, Գեղաշեն 1, Լճառոտ 3, Գեղարդա լիճ 3, 4) քարակոթողները կարող են վկայել ուշ շրջանի ոճի մասին:

Քարակոթողների պատկերագրությունը կերտելու համար կիրառվող ոճական հնարքները հնարավորություն են տալիս պնդելու, որ դրանք ոչ թե զուտ ռեալիստական հուշարձաններ են, այլ կրում են խոր իմաստային բովանդակություն: Այս տեսանկյունից «վիշապ» քարակոթողի՝ որպես արձանի կարևոր գործառույթը տպավորություն գործելն է: Բացի ոճական հնարքներից, տպավորություն գործելուն նպաստում է նաև արձանի կլոր քանդակ լինելը (որի կարևոր պայմանը դրա շուրջը պտտվելու, տարբեր դիրքերից դիտելու հնարավորությունն է), ինչպես նաև՝ ծավալը: Տպավորություն ստեղծելու համար են նախատեսված հատկապես ձկնացլակերպերը, որոնք կերպափոխվող պատկերներ են ստեղծում. մետամորֆոզները, միաձուլումները, մեկը մյուսից դուրս գալը

պլաստիկ և շարժուն են դարձնում արձանը՝ կարծես այն կենդանացնելով: Այսուհանդերձ, «վիշապ» քարակոթողները մինիմալիստական արվեստի օրինակներ են, որոնք, չճանաբեռնելով արձանն ավելորդ մանրամասներով, այն ավելի խորհրդավոր են դարձնում:

Տպավորություն գործելու հնարավորությունը խորացվում է քարակոթողի ձևի մշակմամբ: Ինչպես արդեն նշեցինք, քարակոթողների գերիշխող մասը վերաբերում է միակողմանի կորացող տիպին: Ընդ որում, այս ենթատեսակին են պատկանում ինչպես ձկնակերպերը, այնպես էլ ցլակերպերը: Վերջիններս ձկնաձև են՝ ամենևին էլ չպատկանելով ձկնակերպերին:

Տպավորությունը հատկապես մեծանում է այն բովանդակությամբ, որը թաքնված է պատկերի տակ: Այս իմաստով քարակոթողներն ընդհանրապես, բայց հատկապես բազմապատկեր (Սախուրակ 2, 3, 5, Վանստան 2, Տիրինկատար 2, 4), բազմազիսանի (Արշալույսի սար 5, Իրինդ 1, Վանստան 3, Քարակապ 5) և թռչնապատկերներով առանձնացող (Գեղարդա լիճ 1, Սախուրակ 5, Վանստան 1, Տիրինկատար 9) արձանները «պատմում» են նարատիվներ, որոնք առաջին հերթին կապված են ծննդի, վերարտադրության և կենսական ցիկլի ապահովման գաղափարի հետ:

Հետախուզական աշխատանքների կարևորագույն արդյունքը, ինչպես արդեն նշվեց, Տիրինկատար հուշարձանախմբի հայտնագործումն էր, որտեղ իրականացվել են մանրամասն հետախուզական աշխատանքներ և պեղումներ: Տիրինկատարի բարենպաստ դիրքը, մասնավորապես՝ տեսանելիության հզոր դաշտ ունենալու և անտեսանելի մնալու հնարավորությունը, քամուց պաշտպանված լինելը, ջրային պաշարների առկայությունը, ազատ տարածության հնարավորությունը, գեղագիտական հզոր մթնոլորտը նպաստել են այն բանին, որ տարածքը վերածվի տևականորեն օգտագործվող մշակութային կենսատարածքի: Տեղանքի գոգավորությունը և դրանում ամբարվող խոնավությունը (ջուրը) ստեղծել են տվյալ բարձրության համար անսովոր մեղմ մեզոկլիմա: Արդեն ուշ նոր քարի դարից ու հատկապես պղնձի դարից, երբ կլիման բավականին նպաստավոր է եղել, մարդիկ այցելել են այս վայրը: Սակայն վաղ բրոնզի դարի վերջի և միջին բրոնզի դարի սկզբի կլիմայի կտրուկ չորացումը, թերևս, պատճառ է դարձել տնտեսական-մշակութային փոփոխությունների և տարածաշրջանում քարակոթողների պաշտամունքի ձևավորման, ինչպես նաև ջրով հարուստ լեռնային տարածքներում դրանց տեղայնացման համար:

Տիրինկատարում իրականացված հնագիտական աշխատանքները գալիս են էպես լրացնելու քարակոթողների վերաբերյալ առկա գիտելիքը: Այստեղ առկա 12 քարակոթողներից 9-ը ենթարկվել են պեղումների: Պեղվել են նաև երկու բազմաբջիջ կառույցներ:

Ըստ առկա տվյալների՝ քարակոթողներից 4-ը ձկնակերպ են (Տիրինկատար 5, 6, 10, 11), 8-ը՝ ցլակերպ (1, 2, 3, 4, 7, 8, 9, 12): Ձկնակերպերը սարահարթի կենտրոնից դեպի հյուսիս ընկած մասում են՝ լճակների ու ճահիճների կից, ցլակերպերը՝ սարահարթի կենտրոնից դեպի հարավ և արևմուտք ընկած

հատվածում են, որտեղ ջրային կուտակումներ չկան, բայց տեղումների ժամանակ առաջանում են ճահճային միջավայրեր:

Քարակոթողները գտնվում են հիմնականում սարահարթի վրա, ինչպես նաև սարահարթից շատ քիչ ու սահուն դեպի վեր՝ դեպի շրջակա բլուրները բարձրացող տեղանքում: Վերջինիս վրա են Տիրինկատար 4, 7, 11, 12-ը՝ կարծես վերահսկելով ողջ տարածությունը:

Քարակոթողները հայտնաբերվել են իրենց տեղում՝ in situ (Տիրինկատար 1, 2, 8, 12), իրենց տեղից ոչ հեռու՝ in loco (Տիրինկատար 1, 5, 6, 7, 11), երեքը՝ նախնական տեղից մինչև մոտ 20 մ հեռավորության վրա (Տիրինկատար 3, 4, 9):

Ելնելով քարակոթողների ընկած դիրքից՝ կարելի է ասել, որ դրանք հավանաբար նայել են դեպի հյուսիս-արևելք (Տիրինկատար 1, 2, 7), հյուսիս (Տիրինկատար 8), հարավ (Տիրինկատար 6), հարավ-արևելք (Տիրինկատար 11), հարավ-արևմուտք (Տիրինկատար 12), արևելք (Տիրինկատար 10): Բոլոր դեպքերում արձանների հայացքներն ուղղված են կամ դեպի Արարատ (հարավ), կամ դեպի Արագած (հյուսիս) լեռների գագաթները:

Քարակոթողները հանդիպում են որոշակի կառույցների միջավայրում, որոնք ընդհանուր անվանումով բնորոշում ենք որպես հարթակ, որոնց միջև կան տարբերություններ. դրանք կարող են լինել կրոմլեխատիպ կլոր կառույցներ (Տիրինկատար 10, 11), խճաքարային հարթակներ (Տիրինկատար 1, 5, 7, 8, 11), խճաքարային հարթակին նմանվող, առանձին քարերով սահմանազատվող մեկուսի միջավայրեր (Տիրինկատար 2, 6), կիսալուսնաձև կառույցներ (Տիրինկատար 12), թմբային բարձրություններ (Տիրինկատար 4):

Քարակոթողների համատեքստում հայտնաբերվել են խեցանոթներ (Տիրինկատար 10), խեցանոթի բեկորներ (Տիրինկատար 1-12), վանակատի, սակավաթիվ՝ կայծքարի բեկորներ և գործիքներ (Տիրինկատար 1-12), ուլունք (Տիրինկատար 10), չեչաքարե լողան (Տիրինկատար 10), հնաբուսաբանական նյութեր (Տիրինկատար 1-2, 5-8, 10-12), կենդանական ոսկորներ (Տիրինկատար 2, 7):

Ռեադիոածխածնային տվյալները վկայում են, որ մարդիկ Տիրինկատարի տարածքում են հայտնվել պղնձի դարում (17 տվյալ, որոնցից 1-ը՝ նստվածքներից), վաղ բրոնզի դարում (7 տվյալ, որից 4-ը՝ նստվածքներից), միջին բրոնզի դարում (8 տվյալ, որից 1-ը՝ նստվածքներից. առկա է նաև մեկ օպտիկ-լումինիսցենտային տվյալ), ուշ բրոնզի դարում (3 տվյալ), վաղ երկաթի դարում (6 տվյալ), միջին երկաթի դարում (4 տվյալ, որից 3-ը՝ նստվածքներից), ուշ անտիկ /վաղ միջնադարում (4 տվյալ, որից 2-ը՝ նստվածքներից), զարգացած միջնադարում (4 տվյալ), ուշ միջնադարում (8 տվյալ), նոր և նորագույն շրջանում (2 տվյալ, որից 1-ը՝ նստվածքներից): Հատկապես լավ են ներկայացված պղնձի դարը, միջին և ուշ բրոնզի դարը, վաղ երկաթի դարը, զարգացած և ուշ միջնադարը, թույլ են ներկայացված վաղ բրոնզի դարը, միջին երկաթի դարը, ուշ անտիկ/վաղ միջնադարը:

Ինչպես գտածոները, այնպես էլ բնագիտական մեթոդներով իրականացված թվագրումները վկայում են, որ «վիշապ» քարակոթողներին բնորոշ համատեքստերը կարելի է թվագրել հիմնականում միջին և ուշ բրոնզի դարերով (Ք.ա. մոտ XXII-XIII դդ.): Շատ հավանական է, սակայն, որ դրանց ակունքները հասնում պղնձի դար, երբ տարածքում առաջին անգամ երևացել են մարդկային խմբերը (Ք.ա. VI հազ. վերջ - V հազ. երկրորդ կես՝ Տիրինկատար 2, 8, 7, 10 և Պեղավայր Ը-ի բազմաբջիջ կառույց): Արձանների զգեստնումը սկսվել է վաղ երկաթի դարում (Ք.ա. մոտ XII-IX դդ.՝ Տիրինկատար 1, 7, 8, 12): Ընդ որում, Տիրինկատար 12-ը ոչ միայն զցվել, այլև «պղծվել» է. դրա ողջ պատկերագրությունը նպատակաուղղված ոչնչացվել է թերևս երկաթե գործիքով, Տիրինկատար 7-ը կտրել են ստորին հատվածից, Տիրինկատար 1-ի վրա ժայռապատկերներ և բոլորակ փոսիկներ են փորագրել, Տիրինկատար 5-ի վրա՝ բոլորակ փոսիկներ, օձանման փորագրություններ:

Մարդկանց խմբերը նշված տարածք այցելել են նաև հետագայում՝ միջնադարում, նոր շրջանում, ինչի հետ են կապվում տարատեսակ միջամտությունները և համատեքստերի մասնակի խախտումները: Այդ խախտումները վերաբերում են հատկապես զարգացած և ուշ միջնադարին (Տիրինկատար 1-12-ի մեծաքանակ խեցեղենը, Տիրինկատար 3-ի խաչապատկերը, Տիրինկատար 1-ի տամզաները, արաբատառ կարճ արձանագրությունը, Տիրինկատար 5-ի հավերժության նշանը, Պեղավայր Ե-ի բյուզանդական ֆոլիսը) և 1970-ական թթ., երբ ջրագիծ անցկացնելու ընթացքում փորել են որոշ քարակոթողների տակ /շուրջ (Տիրինկատար 1, 4, 5):

Առկա տվյալները փաստում են, որ Տիրինկատարը եղել է կենտրոնական սրբավայր, որտեղ դաշտավայրերում և նախալեռներում ապրող բնակչությունը պարբերական ուխտագնացություններ է իրականացրել և ծիսակատարություններ արել քարակոթողների միջավայրում (զոհաբերություններ՝ անոթների կտրում, վանակատի կամ կայծքարի սփռում, հեղումներ, կենդանիների մորթ): Դրանք իրականացվել են արժեքի դեպոզիտացման միջոցով (Տիրինկատար 10), բայց հիմնականում՝ առանց դեպոզիտացման (Տիրինկատար 1-2, 5-8, 11-12), երբ այդ արժեքները թողնվել են բաց երկնքի տակ՝ որպես ընծա: Ուշագրավ է օրգանական նյութերի սակավությունը (բուսական մնացորդներ և խոշոր ու մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ՝ Տիրինկատար 2-ից, 7-ից, մագերի մնացորդներ՝ Տիրինկատար 10-ից): Ազատ տարածությունների առկայությունը (Տիրինկատար 2, 8, 10, 11) հուշում է ծիսական հրապարակների մասին: Մի դեպքում արձանագրվել է արձանի թաղում, ինչն արվել է, թերևս, աստվածությանը վերակենդանացնելու նպատակով (Տիրինկատար 10):

Տիրինկատարի մշակութային լանդշաֆտը, սակայն, ներկայացված է ոչ միայն քարակոթողներով: Այստեղ առկա հնագիտական միավորները կարելի է բաժանել մի քանի խմբի՝ բնակելի սեզոնային կառույցներ (բազմաբջիջ, կլոր շինություններ և ճամբարներ, որոնցում մարդիկ ու կենդանիները միասին են ապրել), թաղումային կառույցներ (դամբարաններ), ծիսապաշտամունքային կա-



ռույցներ (կրոմլեխներ, հսկայի տներ, հարթակներ), սահմանազատող կառույցներ (պատեր), 5. «վիշապ» քարակոթողներ (արձաններ), 6. պատկերանշաններ (ժայռապատկերներ, խաչաքանդակներ, տամգաներ, արաբատառ արձանագրություն): Հուշարձանների տարածական դասավորվածությունը հուշում է, որ, հավանաբար, քարակոթողներին ժամանակակից կամ մասամբ ժամանակակից կարող են լինել հարթակները, կրոմլեխները, հսկայի տները, դամբարանները, ժայռապատկերների հիմնական մասը, որոշ բազմաբջիջ և կլոր կառույցներ:

Այսպիսով, հանձին Տիրինկատարի, գործ ունենք միջին և ուշ բրոնզի դարի բարձրադիր սրբավայրի հետ: Սակայն տարածքն օգտագործվել է որպես արոտավայր և սրբավայր ինչպես դրանից առաջ (պղնձի դարի սկզբից սկսած), այնպես էլ հետագայում, երբ վերաիմաստավորվել է քարակոթողների մասին հիշողությունը: Այս մասին են վկայում ինչպես նյութական մշակույթի, այնպես էլ ռադիոածխածնային վերլուծությունների տվյալները: Այս տեսանկյունից «վիշապ» քարակոթող երևույթի ակունքները հասնում են վաղ երկրագործական հասարակություններ, իսկ վերհուշը հասնում է մինչև նոր ժամանակներ:

Ազգագրական տվյալները հաստատում են վերն ասվածը: Նոր ժամանակներում ևս տարածքն օգտագործվում է որպես մարդկային համայնքների տնտեսական և հոգևոր գործունեության միջավայր: Թեև այն բաց է համայնքների համար տարվա որոշակի ժամանակամիջոցում (մայիսի վերջ/հունիսի սկիզբ – սեպտեմբերի առաջին կես), սակայն տարածքն իր կարևորությունը չի կորցնում ողջ տարվա ընթացքում, քանի որ մարդկանց գիտակցության մեջ այն ջրային պաշարների կուտակման ու օգտագործման կարևորագույն գոտի է և հոգևոր կենտրոն:

Նախկինում «վիշապ» քարակոթողներն ընկալվել են զուտ որպես հնագույն ռոզոզվի համակարգերի հանգուցակետերում տեղադրված և ջրի պաշտամունքին առնչվող հուշարձաններ: Նոր հետազոտությունները ցույց են տալիս, որ գործ ունենք շատ ավելի բարդ երևույթի հետ: Այն հանգամանքը, որ քարակոթողները հիմնականում գտնվում են լեռնային հրապարակներում և շրջապատված են այլ տիպի հուշարձաններով, հիմք է տալիս ենթադրելու, որ դրանք նշում են բացօթյա սրբավայրերի առանցքային կետերը:

#### **ԳԼՈՒԽ IV** **ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

«Լանդշաֆտ» հասկացությունը մարդու՝ բնական պայմաններին ադապտացման գործընթացը սահմանող այլաբանություն է: Լանդշաֆտները վաղ հասարակություններում բաժանվել են սին և սրբազան ոլորտների, որոնց ջրբաժանի տեղերում սովորաբար կանգնեցնում էին սահմանաբաժան քարեր. դրանց երկրպագում և զոհեր էին մատուցում: Հնագույն Հայաստանում «վիշապ» քարակոթողները ևս նման գործառույթ պիտի ունենային, ինչը պայմանավորված է

եղել նաև կանգուն քարի ձևի նշմարելիությամբ. կանգուն քարն իր ծավալով ստեղծում է տարածության մեջ շեշտված և կուռ կոմպոզիցիոն առանցք՝ դրանով իսկ կազմակերպելով շրջակա միջավայրը: Ասվածից բխում է, որ քննարկվող հուշարձանը ոչ թե պարզ քարակոթող է, այլ ուղղահայաց և հորիզոնական տարածություն կազմակերպող ճարտարապետական միավոր, որը դեպի իրեն է ձգել մարդկային համայնքները և, որպես ուղենիշ, դարձել նրանց ինքնության առանցքը: Հիշյալ խնդիրները քննարկող ատենախոսության չորրորդ գլուխը համապատասխանաբար բաղկացած է հինգ ենթագլուխներից՝ 1. Ուղղահայաց գոտիականությունը, 2. Քարակոթողների տարածական դիրքավորումը, 3. Տարածության մոդելավորումը, 4. Բնական ուղենիշները, 5. Ենթագոտիներն ու կենտրոնները:

Հայաստանի Հանրապետության տարածքի 115 «վիշապ» քարակոթողները հայտնաբերվել են Արագածի (36 միավոր), Արեգունի (5), Գեղամա (43), Եղնախաղի (2), Ծաղկունյաց (5), Կենաց (1), Սևանի (1), Սյունիքի (5), Վարդենիսի (17) լեռներում: Արագածի վրա հանդիպում են հետևյալ տեսակները՝ ցլակերպ (27), ձկնակերպ (8), ձկնացլակերպ (1), Արեգունի լեռներում՝ ցլակերպ (5), Գեղամա լեռներում՝ ցլակերպ (28), ձկնակերպ (12), ձկնացլակերպ (3), Եղնախաղի լեռներում՝ ցլակերպ (2), Ծաղկունյաց լեռներում՝ ցլակերպ (5), Կենաց լեռներում՝ ցլակերպ (1), Սևանի լեռներում՝ ցլակերպ (1), Սյունիքի լեռներում՝ ցլակերպ (3), ձկնակերպ (2), Վարդենիսի լեռներում՝ ցլակերպ (14), ձկնակերպ (3): Յլակերպերը հանդիպում են ամենուր, ձկնակերպերը՝ Արագածի վրա, Գեղամա, Վարդենիսի և Սյունիքի լեռներում, ձկնացլակերպերը՝ միայն Գեղամա լեռներում (+ մեկ օրինակ Արագածից, որն իր առանձնահատկություններով շեղվում է դասական օրինակներից):

Հայկական լեռնաշխարհի ռելիեֆը, համապատասխան լեռնահամակարգերի և դրանց միջև ընկած սարահարթերի ու գոգավորությունների դասավորությամբ, ներկայանում է որպես որոշակի օրինաչափություններով բնորոշվող մի համակարգ, որի ենթամիավորները հաճախ ստեղծում են առանցքներ և այդ առանցքների շուրջ տարածվող համանման գոտիներ: Քարակոթողները սովորաբար տեղադրված են այդ առանցքային գոտիների հանգուցակետերում, որոնց բովանդակությունը որոշվում է լեռնաշխարհի կարևոր լանդշաֆտային առանձնահատկությամբ՝ ուղղահայաց գոտիականությամբ: Դրա շնորհիվ լեռնաշխարհը կարելի է պայմանականորեն բաժանել ստորին, միջին և բարձր գոտիների, որոնք առանձնանում են իրենց բնորոշ բնակենսական պայմաններով: Վերլուծելով քարակոթողների բարձրությունները, մեկուսի կամ խմբով հայտնվելու առանձնահատկությունները, տեսանելիության դաշտերը, աշխարհագրական ուղղվածությունը, դիրքը, տեղը հարթակում, հիմքը և ուղղվածությունը՝ ակնհայտ է դառնում, որ գործ ունենք նաև պատմականորեն ձևավորված մի համակարգի հետ, որի կրողը բավականին կազմակերպված մի հասարակություն է:

Քարակոթողների երևույթը հասկանալու համար հատկապես կարևոր է դրանց բարձրությունների դասակարգման խնդիրը: Այս հարցը քննարկելու համար անհրաժեշտ է եղել նախ ճշտել բոլոր տեղափոխված քարակոթողների

Նախնական տեղերը, ապա պատասխանել այն հին հարցին՝ արդյո՞ք նախալեռնային քարակոթողները բերվել են բարձրլեռնային գոտուց, թե՛ դրանք կարող էին գտնվել իրենց սկզբնական տեղում: Տեղափոխված քարակոթողների նախնական տեղերը հիմնականում մեզ հաջողվել է պարզել: Ինչ վերաբերում է նախալեռնային քարակոթողներին, ապա այն հանգամանքը, որ դրանք օրինաչափորեն ի հայտ են գալիս գրեթե նույն բարձրության վրա (միջինը՝ մինչև մոտ 2000 մ), իսկ դրանք քանակը բավականին մեծ է, վկայում է այն մասին, որ այդ քարակոթողները տեղափոխված չեն բարձր լեռներից և գտնվում են իրենց նախնական տեղում կամ դրանից ոչ հեռու:

Ըստ առկա տվյալների՝ քարակոթողները հանդիպում են երեք տեսակի բարձրություններում, որոնք մենք, ըստ բնակավայրային համակարգի առկայության աստիճանի, սահմանում ենք որպես՝ 1. նախալեռնային գոտի (մոտ 1000-2200 մ)՝ մշտական բնակավայրերի միջավայրում, 2. նախալեռներից բարձրլեռնային անցման միջանկյալ գոտի (մոտ 2200-2400 մ)՝ քիչ քանակի մշտական բնակավայրերի առկայության հնարավորությամբ և 3. բարձրլեռնային գոտի (մոտ 2400-3000 մ)՝ մշտական բնակավայրերից անդին: Նախալեռնային քարակոթողները ներկայացված են 46 օրինակով (Արագած՝ 11, Արեգունի՝ 5, Գեղամա՝ 7, Եղնախաղի՝ 2, Ծաղկունյաց՝ 5, Կենաց՝ 1, Սևանի՝ 1, Սյունիքի՝ 5, Վարդենիսի՝ 9), միջանկյալները՝ 13 (Արագած՝ 4, Գեղամա՝ 6, Վարդենիսի՝ 3), բարձրլեռնայինները՝ 56 (Արագած՝ 22, Գեղամա՝ 30, Վարդենիսի՝ 4): Այսպիսով, Արեգունի, Եղնախաղի, Ծաղկունյաց, Կենաց, Սևանի, Սյունիքի քարակոթողները հանդիպում են միայն նախալեռնային գոտում, մինչդեռ Արագածի, Գեղամա և Վարդենիսի լեռների օրինակները՝ բոլոր երեք գոտիներում: Փաստորեն, միջանկյալ և բարձրլեռնային քարակոթողները բնորոշ են միայն կենտրոնական շրջաններին (Արագած, Գեղամա, ինչպես նաև՝ Վարդենիսի), մինչդեռ երկրորդային գոտու քարակոթողները լինում են միայն նախալեռներում:

Քարակոթողները հայտնվում են մեկուսի կամ խմբերով: Մեկուսի՝ մեկ օրինակով հանդիպող քարակոթողները առկա են բոլոր մակարդակներում՝ նախալեռնային, միջանկյալ և բարձրլեռնային: Դրանք խմբերով հանդիպում են մասամբ միջանկյալ գոտում (Դաշտադեմի սար 1-2՝ ցլակերպ, Վանստան 1-5՝ ցլակերպ՝ 2, ձկնակերպ՝ 2, ձկնացլակերպ՝ 1) և հատկապես բարձրլեռնային գոտում (Քարակապ 1-5. բոլորը՝ ցլակերպ; Տիրինկատար 1-12. ցլակերպ՝ 8, ձկնակերպ՝ 4; Սախուրակ 1-5. ցլակերպ՝ 1, ձկնակերպ՝ 2, ձկնացլակերպ՝ 2; Ուղտուակունք 1-3. բոլորը՝ ցլակերպ; Արշալույսի սար 1-5. ցլակերպ՝ 3, ձկնակերպ՝ 2; Գեղարդա լիճ 1-8. ցլակերպ՝ 7, ձկնակերպ՝ 1; Գեղասար 1-3. ցլակերպ՝ 1, ձկնակերպ՝ 2; Լճարոտ 1-3. ցլակերպ՝ 2, ձկնակերպ՝ 1; Ալ լիճ 1-3. ցլակերպ՝ 1, ձկնակերպ՝ 2):

Խմբերով հանդիպող բոլոր քարակոթողները ցլակերպերի խմբեր են, բացի Վանստան 1-5, Տիրինկատար 1-12, Սախուրակ 1-5, Արշալույսի սար 1-5, Գեղարդա լիճ 1-8, Գեղասար 1-3, Լճարոտ 1-3, Ալ լիճ 1-3-ից, որտեղ ցլակերպերն ու ձկնակերպերը հայտնվում են միասին (տեսակին վերաբերող թվային օրինաչափություն չի նկատվում): Մինչդեռ Սախուրակ 1-5 և Վանստան 1-5-ում

հանդիպում են նաև ձկնացվակերպեր: Խմբերով հանդիպող քարակոթողների պարագայում որոշակի քանակական օրինաչափություն է նկատվում՝ ըստ կարևորության. մասնավորապես ամենանշանակալի քարակոթողների խմբերը հայտնվում են սահմանափակ տարածքում միասին և համապատասխանաբար (թերևս՝ ըստ կարևորության) մեծ քանակով՝ Տիրինկատար՝ 12, Գեղարդա լիճ՝ 8, Քարակապ՝ 5, Սախուրակ՝ 5, հմմտ. նաև Արշալույսի սար՝ 5, Վանստան՝ 5):

Եշենք, որ նախալեռներում խմբային քարակոթողները ոչ թե նույն ներփակ տարածքում են լինում, այլ իրարից որոշակի հեռավորության վրա (Արտանիշ 1-5, Գառնի 1-2, Լճաշեն 1-2, Թառաթումբ 1-3, Աղավնաձորի սար 1-4, Հարժիս 1-2)՝ թեև տրամաբանական կապ պահպանելով միմյանց հետ:

Վերջինների դիրքի վերաբերյալ բերենք որոշ օրինակներ. այսպես, Լճաշեն 1-ը և Լճաշեն 2-ը իրարից բաժանվում են մեծ բլուրով՝ դառնալով երկու ընդարձակ գոգավոր մարգագետինների «խարիսխներ». երկու կետերից էլ երևում են Լճաշենի ամրոցը և Սևանա լիճը, թեև քարակոթողներն իրար «չեն տեսնում»: Նմանապես ամրոցների, դամբարանադաշտերի և Սևանա լճի միջավայրում է Սարուխակ 1-ը, որն, ի դեպ, իր առանձնահատկություններով և հատկապես պատկերագրությամբ նմանվում է Լճաշեն 1-ին: Ուշագրավ է նաև իրար կից գտնվող Մադինայի սար 1-ի և Վարդենյաց 1-ի համատեքստը. վերջիններս գտնվում են նույն աշխարհագրական միջավայրում, գրեթե նույն բարձրության վրա, բայց միմյանց համար տեսանելի չեն: Սակայն, եթե Մադինայի սար 1-ը որոշակի մշակութայնացված ոլորտում է, և դրա շրջակայքում բացի դամբարանադաշտերից կան նաև ամրոցներ, ապա Վարդենյաց 1-ը գտնվում է համանուն լեռնանցքի ամենաբարձր կետի շրջանում, ինչը թերևս պատահական չէ: Արագածյան նախալեռնային գոտում նման հարաբերության մեջ են գտնվում Ոսկեթառ 1-ը և Սառնաղբյուր 1-ը. երկուսն էլ տիպիկ հրապարակների կենտրոնում են, որոնք ներփակվում են յուրահատուկ մշակութայնացված ոլորտներ, իսկ քարակոթողները կարծես այդ աշխարհի առանցքն են. երկու կետերից էլ երևում են Ծաղկասարի և շրջակա ամրոցները, թեև այդ քարակոթողներն իրար «չեն տեսնում»:

Քարակոթողների մեծ մասը ձգտում է խմբավորվել մեկուսացված և քամուց պաշտպանված գոգահովիտներում, մինչդեռ որոշ «մենակյացներ» այցելուին տպավորում են որպես եզակի միավոր (հմմտ. Լճաշեն 1, 2, Մադինայի սար 1, Վարդենյաց 1, որոնք գտնվում են սարի այս և այն կողմում): Երկու դեպքում էլ քարակոթող կերտողները խուսափել են լեռնային միջավայրի երկայնքով «տեսանելիության ցանցի» ստեղծումից: Ինչպես խմբավորված քարակոթողները, այնպես էլ «մենակյացները» մեծապես «ինքնաբավ են» և՛ որպես խումբ, և՛ որպես մենաքար: Ստեղծվում է տպավորություն, թե քարակոթողները անտեսանելի են շրջապատի համար, սակայն իրենց համար «տեսանելի է ամեն ինչ». պատահական չէ, որ համապատասխան գոգավորություններից (հմմտ., օրինակ, Սախուրակը, Տիրինկատարը, Գեղասարը) անսահման տեսարան է բացվում լեռնաշխարհի տարբեր ուղղություններով: Դրանցից որոշները գտնվում են հրվանդան հիշեցնող միջավայրում (հմմտ. Գողթի սար 1)՝ առաջին հայացքից

ստեղծելով տեսանելիության ավելի լայն հնարավորություն: Սակայն այստեղ ևս դրանք վերևից իշխում են տարածությանը՝ գրեթե չլինելով տեսանելի: Մեկուսի քարակոթողների ամենակարևոր առանձնահատկությունը և տարբերությունը խմբավորվածներից այն է, որ դրանք տեղադրված են այնպես, որ համապատասխան կետից ոչ մի այլ քարակոթող չի երևում:

Մեր դիտարկումները հիմք են ստեղծում ենթադրելու, որ քարակոթողների տեղադրությունը արտացոլում է որոշակի համակարգ, որը դրսևորում է դասավորվածության և բարձրության օրինաչափություններ: Այսպես, Արագածի հրվանդանները կարծես «վիշապ» քարակոթողների կենտրոններ են, որտեղ այդ արձանները տեղակայված են նույնատիպ հարթությունների վրա (հմմտ., օրինակ, Տիրինկատար 1-12-ը և Օշականի սար 1-ը, որոնք իրար զուգահեռ են և գտնվում են նմանատիպ գոգավորությունների ու գրեթե նույն բարձրության վրա. նման միջավայրերը, բայց ոչ քարակոթողները, տեսանելի են մեկը մյուսի համար): Այդ հարթությունները դարավանդ-հրվանդաններով իջնում են վար՝ միմյանց հետ կապ պահպանելով լեռնային ճանապարհների միջոցով (հմմտ. Տիրինկատար 1-12 - Շամիրամի սար 1 - Սառնաղբյուր 1 և Ոսկեթաս 1 ուղղությունը):

Իսկ ի՞նչ տեսանելիության դաշտեր են եղել «վիշապ» քարակոթողների տարբեր կենտրոնների միջև: Այս պարագայում բարձր լեռներն իրենք են դարձել տեսանելի ուղենիշ: Այսպես, Մուշի շրջակայքի բարձունքներից երևում են Մասիսը, Բյուրակնը, Նեմրուջը, Գրգուռը, Ծաղկանց լեռները: Վարագա և Բյուրակնյան լեռներից երևում են Արագածը և Մասիսը: Ընդհանրապես Մասիսն ու Արագածը՝ որպես կարևորագույն ուղենիշներ, գտնվում են «վիշապ» քարակոթողներ ստեղծող հասարակության ուշադրության կենտրոնում: Արագածի և Գեղամա լեռների գրեթե բոլոր «վիշապ» քարակոթողներին բնորոշ միջավայրերից երևում է Մասիսը, ինչը ժամանակին նկատել է Ն. Մառը: Նա գրում է. «Տեսարանը դեպի սուրբ լեռը միշտ առանձնահատուկ է «վիշապ» քարակոթողների տեղադրության համար»: Արագածը երևում է Արտանիշից, Բուժականից, Դարիկից, Փարվանայի բարձունքներից:

Հարց է առաջանում, թե քարակոթողների սրբազան տարածքների ուղղվածությունը, բացի գեղագիտական դրդապատճառից, արդյո՞ք ունեցել է նաև կիրառական նշանակություն: Քարակոթողների հիմնական կենտրոններ Արագածի և Գեղամա լեռների օրինակով պարզ է դառնում, որ արձաններն ուղղված են դեպի հարավ, ինչը թերևս տնտեսական դրդապատճառներ ունեն՝ կապված լինելով Արարատյան դաշտի բարեբերության և ոռոգման ապահովման հետ: Լեռների հարավային կողմերը, բնականաբար, որոշակի առավելություններ ունեին տնտեսության զարգացման տեսանկյունից: Այս հարցի պատասխանը, սակայն, կապված է քարակոթողների գործառույթի վերջնական ճշգրտման հետ:

Կարևոր է քարակոթողների կանգնած կամ պառկած լինելու հարցը: Ներկայումս քարակոթողների մեծ մասն իրենց սկզբնական տեղում է՝ հորիզոնական դիրքով ընկած: Տիրինկատարում պեղված բոլոր քարակոթողները ևս նույն դիրքով են եղել: Միայն Տիրինկատար 10-ը պեղվել է in situ՝ հորիզոնական դիր-

քով, սակայն, չի բացառվում, որ այստեղ գործ ունենք նախկինում կանգնած քարակոթողի թաղման հետ: Քարակոթողների՝ սկզբնապես կանգնած լինելու տեսակետի օգտին են խոսում հետևյալ փաստերը. 1. քարակոթողների բոլոր տիպերը մշակված են բոլոր կողմերում, բացի ստորին՝ պոչային հատվածից (նախնական բարձրությունը կանգնած վիճակում կարելի է վերականգնել՝ չափելով մշակված մակերեսի բարձրությունը), 2. եթե ձկնային մանրամասները տեղադրված են մարմնի ողջ պարագծով, ապա ցլերը քանդակված են ձկան փորին կամ մեջքին՝ որպես կանոն, կառուցվածքային կենտրոն ունենալով ձկան փորը, ինչը նշանակում է, որ դրանք հորիզոնական-բնական դիրքով դնելը բացառվում էր, 3. մի շարք դեպքերում քարակոթողների մակերեսին տեսանելի է սպիտակավուն քարաքոս. այն քարակոթողների վրա, որոնք շրջել էին Ն. Մառն ու Յ. Սմիռնովը 1909 թ., նոր քարաքոս չկար: Մյուս կողմից, քարաքոս տեսանելի էր Սախուրակ 1-ի ուշ արված խաչի վրա, երբ քարը դեռ կանգուն էր: Խաչը քանդակվել է XIV դ. թվագրվող արձանագրության հետ միասին, ինչը terminus post quem է այս քարակոթողի «ընկնելու» ժամանակաշրջանը ճշտելու համար:

Ինչպես ցույց է տալիս իրենց նախնական տեղում գտնվող քարակոթողների քննությունը, դրանց մեծ մասն ընկած է in situ՝ հարթակի կենտրոնում (Սախուրակ 1, 3, 4, 6-ը, Մաղալներ 1-ը, Գեղասար 3-ը): Սա վկայում է այն մասին, որ քարակոթողները կարող էին գտնվել հարթակի կենտրոնում կամ եզրագծին: Տիրինկատարի պեղումների շնորհիվ հարթակի միջնամասում են գտնվել Տիրինկատար 7, 8, 12-ը, կողային մասում՝ 1, 2, 5, 11-ը: Սակայն դրանք կարող են մասամբ տեղաշարժված լինել: Միայն Տիրինկատար 7 և 10-ն են գտնվել իրենց տեղում՝ հարթակի կենտրոնական հատվածում:

Քարակոթողները հողի մեջ դրվել և ամրացվել են առանձին՝ միջին և փոքր չափի քարերով, ինչի մասին է վկայում Տիրինկատար 7-ը, որի բունը հայտնաբերվել է իր նախնական տեղում: Հողի մեջ գտնվելու խորությունը չափելի է քարակոթողի անմշակ հատվածով, ընդ որում, ինչքան մեծ է քարակոթողը, այնքան մեծ պիտի լիներ հողի խորությունը:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե քարակոթողները որ ուղղությամբ են նայել, պատասխանը բարդ է, քանի որ քարակոթողների զգալի մասը տեղաշարժված է: Այս խնդրի մասին կարելի է խոսել պեղված քարակոթողների օրինակով: Իրենց նախնական տեղում գտնվող Տիրինկատար 10-ն ուղղված է դեպի արևելք, իսկ Տիրինկատար 7-ը՝ հյուսիս-արևելք:

Կարևոր է նաև մինչ վերջերս կանգուն քարակոթողների խնդիրը: Մի քանի դեպքում (Գեղասար 1՝ Գեղամա լեռներում, Ջովունու սար 1, Կոտուրի սար 1, Սառնաղբյուր 1՝ Արագածի լեռնազանգվածում) քարակոթողը կանգուն է իր նախնական դիրքով: Հարց է առաջանում, թե ի՞նչ ժամանակահատվածի ընթացքում են դրանք կանգնած եղել, արդյո՞ք ի սկզբանե: Ջավախքի մի շարք քարակոթողների օրինակով կարելի է ենթադրել, որ որոշ քարակոթողներ թերևս երբեք հողի տակ չեն անցել, մշտապես գտնվել են մարդկանց ուշադրության կենտրոնում: Սակայն շատ քարակոթողներ կարող էին անցնել հողի տակ, նորից հայտնաբերվել և վերաօգտագործվել:

Լեռնաշխարհի ուղղահայաց գոտիականությունն արտացոլվել է մարդկային համայնքների՝ տարածքի յուրացման և կազմակերպման գործընթացում: Դաշտավայրային, նախալեռնային և բարձրլեռնային գոտիներում գտնվող մշտական և ժամանակավոր բնակավայրերը, դրանց առնչվող տնտեսական գոտիներն ու սրբավայրերն այն հիմնական միավորներն են, որոնց շուրջ ձևավորվել է համապատասխան սոցիալական միջավայրը: Այդ բոլոր երեք մակարդակները հաճախ կրկնել են իրար՝ բնորոշվելով նյութական և հոգևոր մշակույթի միանման տարրերով, ինչպես նաև՝ անվանումներով:

Գտնվելով նախալեռնային և բարձրլեռնային գոտիներում՝ քարակոթողներն այդ երկու մակարդակներում էլ դրսևորում են միջավայրային մակարդակի ընդհանրություններ: Նախալեռնային քարակոթողների մեծ մասը (Լճաշեն 1-2, Ոսկեթափ 1, Սառնաղբյուր 1, Մաղինայի սար 1, Վարդենյաց 1, Սարուխան 1, Դարիկ 1) ի հայտ է գալիս ճիշտ այնպիսի գոգավոր հրապարակներում, որոնք բնորոշ են նաև բարձրադիր քարակոթողներին. այս գոգավորությունները, հիմնականում լինելով երկրաբանական կրկեսներ, կարծես կրկնում են Հայկական լեռնաշխարհի աշխարհագրության ամենակարևոր առանձնահատկությունը՝ սարահարթը:

Ինչպես բարձրադիր, այնպես էլ նախալեռնային քարակոթողներն ի հայտ են գալիս նույնատիպ բնական (լեռ, լիճ, մարգագետին) և մշակութային (կրում-լեխ, դամբարան, հսկայի տուն և այլն) միջավայրերում:

Երկու մակարդակների աշխարհագրական պատկերի հարազատությունը ստեղծում է տպավորություն, թե նախալեռնային «վիշապ» քարակոթողների միջավայրերը արտացոլում կամ վերարտադրում են բարձրադիր քարակոթողների միջավայրերը. ուրեմն այդ արձանները ստեղծող հասարակությունը, հավանաբար, կարող էր ունենալ «աշխարհի իր մանրակերտը», որն ուղղակիորեն արտահայտված է տարածության կազմակերպման մեջ: Վերն ասվածը փաստում է քարակոթողների միևնույն մշակութային համակարգի երկու մակարդակներում համատեղ առկայության հանգամանքը, ինչն ապացուցվում է նաև նրանով, որ այդ արձանների տիպաբանությունն ըստ բարձրությունների առայժմ հնարավորություն չի տալիս առանձնացնել ժամանակագրական տարբեր խմբեր, որովհետև երկու մակարդակների միավորներն իրենց բնորոշ հատկանիշներով էապես համընկնում են:

Քանի որ «վիշապ» քարակոթողների լանդշաֆտներն իրենց բնական առանձնահատկություններով կրկնվում են լեռնաշխարհի տարբեր ենթաշրջաններում նաև հորիզոնական մակարդակում, հնարավոր է, որ դրանց ստեղծողներն հատուկ են ընտրել այն տարածքները, որոնցում կերտել են իրենց արձանները: Կրկնվող լանդշաֆտի գիտակցական ընտրությունը ինքնություն կերտող կարևոր նախապայման է: Մարդկային խմբերը, տեղափոխվելով մի տեղից մեկ այլ տեղ, վերստեղծել են իրենց նախնական միջավայրերը՝ դրանով իսկ այդ տարածքների նկատմամբ ներկայացնելով յուրացման ու խնամքի հայտ՝ վերահաստատելով իրենց համընդհանուր հիշողության կենսունակությունը:

«Վիշապ» քարակոթող ստեղծող հասարակությունն ունեցել է լանդշաֆտի յուրացման և դրա խնամքի սեփական տարբերակը, ինչը հստակ երևում է կրկնվող լանդշաֆտների ակնհայտ օրինաչափությունից: Ընտրվել են համապարփակ սարահարթ ներկայացնող բաց, անտառազուրկ տարածքներ: Սրա պատճառը պարզ է. կանգուն քարը պետք է դիտվեր տարածության մեջ՝ որպես ուղենիշ նպաստելով համայնքների միավորմանն ու համայնական հիշողության ձևավորմանը:

«Վիշապ» քարակոթողների լանդշաֆտները կերտել են մի քանի բնական ուղենիշներ՝ լեռը, մարգագետինը, ջրային աղբյուրը, լիճը, մասամբ նաև քարանձավը, որոնք գտնվում են ամֆիթատրոն կամ հրվանդան հիշեցնող տեղանքում: Այս ուղենիշներից լեռը, մարգագետինը և աղբյուրը հաստատուններ են, որոնք վերաբերում են բոլոր քարակոթողներին: Հաճախ, բայց ոչ միշտ են հանդիպում լճերը, հազվադեպ՝ քարանձավները:

Առկա հնագիտական տվյալները վկայում են, որ Արագածն առայժմ քարակոթողների արխաիկությամբ բնորոշվող առաջնային միջավայրն է: Արագածյան Տիրինկատար սրբավայրում են կուտակված մինչ օրս հայտնի ամենամեծ քանակության քարակոթողները: Արագածյան պարզ քարակոթողների կատարյալ ձևերը հայտնվում և բազմապատկվում են Գեղամա լեռներում, իսկ միջանկյալ ձևերը՝ Հայկական լեռնաշխարհի այլ ենթագոտիներում: Սա խոսում է թերևս այն մասին, որ Արագածը պիտի լիներ քարակոթողների ձևավորման օրրանը, իսկ Գեղամա լեռները՝ «ծաղկման շրջանի» կենտրոնը (պատահական չէ, որ, եթե ցլակերպերը հանդիպում են ամենուրեք, ձկնակերպերը՝ գրեթե ամենուրեք, ապա բարձր վարպետությամբ արված ձկնացլակերպերը՝ միայն Գեղամա լեռներում): Այսպիսով, Այրարատ աշխարհը (և մասնավորապես Արագածոտնը) քարակոթողների առաջացման գոտին է, որտեղից այդ արձանները տարածվել են լեռնաշխարհի այլ շրջաններում: Թերևս պատահական չէ նաև այն, որ ամենաբարձրադիր քարակոթողները գտնվում են Արագածի և Գեղամա լեռների վրա, որտեղից դրանք աստիճանաբար կարող էին «իջնել» ցած:

Միևնույն ժամանակ հնարավոր է, որ քարակոթողների տարածման տարբեր գոտիները կազմում են որոշակի ենթախմբեր, որոնք բնորոշվում են յուրահատուկ հատկանիշներով: Այդպիսի ակնհայտ խմբեր կարող են լինել, օրինակ, Արագածի (արխաիկ), Գեղամա (գարգացած) և Սյունիքի (մարգինայ) լեռների օրինակները: Հարց է առաջանում՝ եթե կան տարածական առանձնահատկություններ, կա՞րողյոք նաև ժամանակագրական տարբերություն: Խնդիրն ամբողջությամբ պարզ չէ. սակայն, եթե այդպիսի տարբերություն կա, ապա, հավանաբար, այն մեծ չէ տարատեսակ տարածական խմբերի միջև, քանի որ մեծ չէ քարակոթողները տարանջատող հատկանիշների քանակը:



## ԳԼՈՒԽ V ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԵԸ

«Վիշապ» քարակոթողների երևույթը թվագրելու և այն մեկնելու համար առանցքային է այն հարցը, թե այդ քարակոթողներն ի՞նչ հնագիտական համատեքստում են հանդիպում: Վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ քարակոթողները հայտնվում են որոշակի մշակութայնացված միջավայրում, որը բաղկացած է տարատեսակ ծխապաշտամունքային և կիրառական նշանակության հուշարձաններից: Հիշյալ խնդիրը քննարկող հինգերորդ գլուխը բաղկացած է հինգ համապատասխան ենթագլուխներից՝ 1. Մշակութայնացված միջավայրը, 2. Հարակից կառույցները, 3. Ճանապարհները, 4. Ժայռապատկերները, 5. Արտեֆակտներն ու էկոֆակտները:

Հարցի ուսումնասիրության պատմության տեսանկյունից պետք է նշել, որ պետերբուրգյան դպրոցը (Ն. Մառ, Յ. Սմիռնով, Բ. Պիոտրովսկի) քարակոթողները չի դիտարկում հնագիտական որևէ համատեքստում: Մինչդեռ հայ հետազոտողները (Ատրպետ, Ա. Քալանթար, Թ. Թորամանյան, Գ. Ղափանցյան, Բ. Առաքելյան, Հ. Մարտիրոսյան, Հ. Պետրոսյան) ավելի առաջ են անցնում՝ նշելով, որ քարակոթողների միջավայրում կարող են լինել ջրանցքներ, դամբանաթմբեր, կրոմլեխներ, սրբարաններ, հսկաների տներ, աշտարակներ, ժայռապատկերներ):

Մեր հետազոտությունները փաստում են, որ քարակոթողներին կից կամ անմիջական հարևանությամբ առկա են դամբարաններ, կրոմլեխներ, արհեստական քարակույտեր, հսկայի տներ/աշտարակաձև շինություններ, բազմաբջիջ կառույցներ, ոռոգման ջրանցքներ, ամրոցներ, պատեր, մենհիրներ, ժայռապատկերներ: «Վիշապ» քարակոթողների միջավայրերում փաստագրվել են նաև ճանապարհներ, որոնց մի մասը հստակ ընթանում է դեպի քարակոթողների հարթակները (Արշալույսի սար 5, Այլախ լիճ 1)<sup>1</sup> ունենալով մինչև երկու հարյուր մետր երկարություն. կան նաև ճանապարհներ, որոնք ընթանում են դեպի քարակոթողի մոտակայքում գտնվող կրոմլեխներ/դամբանաթմբեր (Գեղասար 3, Գեղարդա լիճ 1, 4, Վանստան 2, 3, 5, Ալ լիճ 1): Եթե քարակոթողները գտնվում են սարահարթում, ապա ոչ մեծ քանակի դամբարանները և աշտարակաձև կառույցները օրինաչափորեն լինում են գոգավորությունը եզերող բլուրների բարձրակետերի վրա, մինչդեռ ժայռապատկերների կուտակումները՝ բլրի լանջերին: Բազմաբջիջ և կլոր կառույցները հաճախ հանդիպում են սարահարթի եզրային հատվածներում: Կրոմլեխները ևս սարահարթում են: Փաստորեն, հուշարձանների տարբեր միավորները միմյանց առնչվում են տարածականորեն, հետևապես նաև ժամանակագրորեն: Այսինքն՝ տարածական-տրամաբանական կապը կարող է խոսել հիշյալ հուշարձանախմբերի համաժամանակության կամ մասնակի համաժամանակության մասին:

Պեղումների ընթացքում քարակոթողների անմիջական միջավայրում հայտնաբերվել են նաև արտեֆակտներ (խեցեղեն, վանակատ, ուլունք, սուգաքար, սանդ) և էկոֆակտներ (հացահատիկ, ոսկոր, մազ), որոնք վկայում են քարակոթողների շուրջ իրականացված ծխական գործողությունների մասին:

## ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ատեսնախոսության սահմաններում իրականացված ուսումնասիրությամբ հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

1. Ժողովրդական միջավայրում «վիշապ» կոչված քարե արձանների հետազոտության պատմությունը կարելի է բաժանել հետևյալ հիմնական փուլերի՝ 1. 1600-1908 թթ., երբ նախնական տվյալներ են հայտնվում այդ քարակոթողների վերաբերյալ, 2. 1909-1912 թթ., երբ սկսվում են քարակոթողների առաջին գիտական հետազոտությունները, 3. 1913-1920 թթ., երբ առաջին հետազոտություններն արձագանք են ստանում գիտական հանրության միջավայրում, 4. 1921-1939 թթ., երբ քարակոթողների ուսումնասիրությունը հասցվում է գիտական լուրջ մակարդակի, 5. 1940-2010 թթ., երբ նոր տեղեկություններ են ի հայտ գալիս դրանց վերաբերյալ, 6. 2011-2023 թթ., երբ քարակոթողները ենթարկվում են կանոնավոր հետազոտության: Այս ատեսնախոսության հիմքում ընկած են վերջին աշխատանքները, որոնց շնորհիվ ամբողջական տվյալներ են հավաքվել Արագածի (36 միավոր), Արեգունի (5), Գեղամա (43), Եղնախաղի (2), Ծաղկունյաց (5), Կենաց (1), Սևանի (1), Սյունիքի (5), Վարդենիսի (17) լեռներում գտնվող 115 քարակոթողների մասին: Բացի այդ, աշխատանքում օգտագործվել են Արագածի հարավային բարձունքներում գտնվող նորահայտ Տիրինկատար հուշարձանի պեղումների արդյունքները: Հիշյալ քարակոթողներից 59-ն առաջին անգամ են շրջանառության մեջ մտցվում: Այս հետազոտությունների շնորհիվ հնարավոր է դարձել «վիշապ» քարակոթողների երևույթի սահմանումը:

2. «Վիշապ» քարակոթողները բոլոր կողմերում մշակված, կենդանակերպ պատկերագրությամբ օժտված կլոր քանդակներ են, որոնք ունեն մոտ 110-550 սմ բարձրություն, պատրաստված են կարծր նյութից՝ գլխավորապես անդեզիտաբազալտից:

3. Քարակոթողները դիտարկելի են մեզայիթյան համալիրի համակարգում՝ զուտ մեծաքարային և մոնոլիթ լինելու, ինչպես նաև նախագրային շրջանին վերաբերելու պատճառով: Սակայն իրենց մշակմամբ, պատկերագրությամբ և հասարակական նշանակությամբ որպես քանակով սահմանափակ, տարածքով սահմանված և ինքնություն ստեղծող ուղենիշներ՝ դրանք ակնհայտ քարակոթող-արձաններ են:

4. Քարակոթողներից ոչ մեկը մյուսին չի կրկնում, բայց դրանք կրում են ձևաբանական և պատկերագրական ընդհանուր հատկանիշներ, որոնց հիման վրա հնարավոր է դառնում սահմանել այդ քարակոթողների տիպաբանությունը, ինչը մենք իրականացրել ենք ըստ պատկերի, պատկերի քանդակման եղանակի, քարակոթողի մշակման ոճի, ձևի և պրոֆիլի: Քարակոթողների երեք տիպերը՝ ցլակերպ, ձկնակերպ և ձկնացլակերպ, ունեն այնպիսի ընդհանուր հատկանիշներ, որոնք հնարավորություն են տալիս դրանք դիտարկել որպես միասնական երևույթ:

5. Քննարկվող հուշարձանի ձևավորման համար կիրառվում է կենդանական զուսպ և մինիմալիստական ոճ՝ հիմնված խոշոր եղջերավորների և ձկների ոչ լիակատար համաչափ պատկերների վերարտադրության վրա: Առկա են նաև զույգ թռչունների և սահմանափակ քանակությամբ առարկաների առանձին պատկերներ:

6. Քարակոթողների ոճաբանական առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ գործ ունենք այդ արձանների կերտման կենտրոնական (Արագած, Գեղամա լեռներ) ու մարգինալ (Արեգունի, Եղնախաղի, Ծաղկունյաց, Կենաց, Սևանի, Սյունիքի լեռներ) ոճերի հետ: Հնարավոր է առանձնացնել նաև միջանկյալ ոճ (Վարդենիսի լեռներ): Պատկերագրական տվյալները հնարավորություն են տալիս քննարկելու նաև այդ ոճերի զարգացման օրինաչափությունները: Այսպես, առանց պատկերի, մասնակի կամ հազվի նշմարվող պատկերով և տձև միջանկյալ ձևերի գոյության հանգամանքը հուշում է արխաիկ ոճի մասին: Մինչդեռ ֆալիկ գլխով, մենհիր հիշեցնող, օձ կամ այծ պատկերող, մարդակերպության տարրերով բնորոշվող քարակոթողները կարող են վկայել ուշ շրջանի ոճի մասին:

7. Քարակոթողի՝ որպես արձանի կարևոր գործառույթը տպավորություն գործելն է, ինչը, բացի ոճական հնարքներից, էապես կապվում է արձանի կյոր քանդակ լինելու և դրա ծավալի հետ: Որպես մինիմալիստական արվեստի օրինակներ՝ քարակոթողները, չճանրաբեռնելով արձանն ավելորդ քանդակներով, այն դարձնում են էլ ավելի խորհրդավոր:

8. Տպավորությունը, սակայն, մեծանում է այն բովանդակությամբ, որը թաքնված է պատկերի տակ: Այս իմաստով «վիշապ» քարակոթողներն ընդհանրապես, իսկ հիբրիդ, բազմազխսանի և թռչնապատկերներով առանձնացող օրինակները հատկապես, պատմում են նարատիվներ, որոնք կապված են ծննդի, վերարտադրության և կենսական ցիկլի ապահովման գաղափարի հետ:

9. Քարակոթողներն ըմբռնելի են հատկապես իրենց նախնական միջավայրում: Այս տեսանկյունից «վիշապային» տարածության կազմակերպման սկզբունքները համահունչ են լեռնաշխարհի բնակչության՝ տեղական ռելիեֆին ադապտացման պատմական տրամաբանությանը: Մասնավորապես, Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել մշակութայինացված տարածքների երեք մակարդակ՝ դաշտավայրային, նախալեռնային և բարձրլեռնային: «Վիշապ» քարակոթողները գլխավորապես վերջին երկու մակարդակների առանցքային կետերում տեղադրված և խորհրդանշական բարձր ծանրաբեռնվածությամբ օժտված հուշարձաններ են:

10. Հայաստանի Հանրապետության տարածքի քարակոթողները հայտնաբերվել են առանձին կամ խմբերով՝ մեկուսացված և քամուց պաշտպանված մարգագետիններում: Երկու դեպքում էլ քարակոթող կերտողները խուսափել են լեռնային միջավայրի երկայնքով «տեսանելիության ցանցի» ստեղծումից:

11. «Վիշապ» քարակոթողներին բնորոշ լանդշաֆտները գտնվում են մի քանի անփոփոխ բնական ուղենիշների միջավայրում, որոնք են՝ լեռը, մարգագետինը, ջրային աղբյուրը, լիճը:

12. «Վիշապային» լանդշաֆտներում, արձաններին կից կամ դրանց շուրջ, հանդիպում են տարատեսակ հուշարձաններ՝ դամբարաններ, կրոմեխներ, արհեստական քարակույտեր, ճանապարհներ, հսկայի տներ/ աշտարակաձև շինություններ, բազմաբջիջ կլոր կառույցներ, ոռոգման համակարգեր, մենհիրներ, ամրոցներ, որոնք լիովին կամ մասամբ ժամանակակից են քարակոթողներին:

13. Քարակոթողների հզոր կուտակմամբ և դրանց արխաիկությամբ բնորոշվող Արագածի հարավային լանջերն առայժմ կարելի է համարել քննարկվող երևույթի օրրան: Արագածյան քարակոթողների կատարյալ ձևերը հայտնվել և զարգացման գագաթնակետին են հասել Գեղամա լեռներում, իսկ միջանկյալ ձևերը՝ Հայկական լեռնաշխարհի այլ ենթազոտիներում:

14. Նյութական մշակույթի և ռադիոածխածնային վերլուծությունների տվյալները վկայում են, որ քարակոթողների համատեքստերը կարելի է վերագրել հիմնականում միջին և ուշ բրոնզի դարերին (Ք.ա. մոտ XXII-XIII դդ.): Քարակոթողների հայտնվելը թերևս կապված է վաղ բրոնզի դարի վերջի և միջին բրոնզի դարի սկզբի կլիմայի կտրուկ չորացման հետ, որն էլ գուցե պատճառ է դարձել տնտեսական և մշակութային փոփոխությունների, տարածաշրջանում «Վիշապ» քարակոթողների երևույթի ձևավորման ու ջրով ավելի հարուստ լեռնային տարածքներում դրանց տեղայնացման համար: Սակայն հավանական է, որ քարակոթողների ակունքները հասնում են վաղ երկրագործական հասարակությունների գոյության շրջան, երբ մարդկային խմբերն առաջին անգամ գալիս են բարձրլեռնային գոտիներ (Ք.ա. VI հազ. վերջ - V հազ. երկրորդ կես)՝ գիտակցելով դրա՝ որպես տնտեսական և հոգևոր կենսատարածքի, ներուժը: Արձանների զգեստումը սկսվել է վաղ երկաթի դարում (Ք.ա. մոտ XII-IX դդ.):

15. «Վիշապ» քարակոթողները կերտել են միևնույն կենսատարածքում բնակվող և նույնական արժեհամակարգ կրող հասարակությունները, որոնք մշակված քարակոթողի խորհրդանիշով ու դրան առնչվող կրկնվող տոների միջոցով փորձել են խտացնել և ավանդել առանցքային իրադարձությունների հետ կապված համայնական հիշողությունը: Այն հանգամանքը, որ այդ արձանները գտնվում են լեռնային հրապարակներում և շրջապատված են այլ տիպի հուշարձաններով, հիմք է տալիս ենթադրելու, որ դրանք նշում են սրբավայրերի առանցքային կետերը՝ լեգիտիմացնելով հնագույն համայնքների լեռնային գոտիների ներուժն օգտագործելու հետ կապված տնտեսական պահանջները:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Բոբոխյան Ա.**, Հովհաննիսյան Կ. 2016, Վիշապաքարերը Տարագրոսի ուսումնասիրություններում, Լրաբեր հասարակական գիտությունների 3, Երևան, էջ 240-253:
2. **Բոբոխյան Ա.** 2017, Նիկողայոս Մառի արխիվը Սանկտ-Պետերբուրգում, Էջմիածին 1, Վաղարշապատ, էջ 152-167:
3. **Բոբոխյան Ա.** 2017, Լեզվամշակութային համադրությունների սահմանները, Էջմիածին 8, Վաղարշապատ, էջ 118-128:
4. **Բոբոխյան Ա.** 2020, «Թարմանա ծովն ու Արարա լեռը». կենսատարածքի կազմակերպման առանձնահատկությունները Վանա լճի ավազանում Բ.ս. II հազարամյակում, Լրաբեր հասարակական գիտությունների 3, Երևան, էջ 248-280:
5. **Բոբոխյան Ա.** 2020, Ատրպետի «գիտական արկածները» և վիշապ քարակոթողների հայտնագործումը, Երևան, «Հայաստանի պատմության թանգարան», 151 էջ:
6. **Բոբոխյան Ա.** 2020, Միհրականության, «վիշապ» քարակոթողների և լեռնային տեմենուների շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների 1, Երևան, էջ 446-451:
7. **Բոբոխյան Ա.** 2023, Աստվածները, հերոսները և սրբերը. հայոց լեռները որպես սրբազան թաղումների միջավայր, Պատմաբանասիրական հանդես 1, Երևան, էջ 166-182:
8. **Բոբոխյան Ա.**, Տարոնցի Ս. 2020, Մեծ Մասիսի նորահայտ «Վիշապ» կոթողը, և լեռան նշանակությունը տարածաշրջանային համատեքստում, Պատմաբանասիրական հանդես 2, Երևան, էջ 47-67:
9. **Բոբոխյան Ա.**, Տարոնցի Ս., Դալայան Տ. 2023, Խարբերդի «վիշապային քարը» և դրա մշակութաառասպելաբանական համատեքստը, Պատմաբանասիրական հանդես 3, Երևան, էջ 246-257:
10. **Բոբոխյան Ա.** 2024, Մանուկ Աբեղյանի «Վիշապներ» աշխատության ստեղծման հանգամանքները, Լրաբեր հասարակական գիտությունների 2, Երևան, էջ 336-349:
11. Ավետիսյան Հ., Գնունի Ա., Սարգսյան Գ., Մկրտչյան Լ., **Բոբոխյան Ա.** 2023, Արցախի մեգալիթյան մշակույթը, Երևան, ՀԱԻ հրատ., 183 էջ:
12. Gilibert A., **Bobokhyan A.**, Hnila P. 2012, Dragon Stones in Context: The Discovery of High-Altitude Burial Grounds with Sculpted Stelae in the Armenian Mountains, Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft 144, Berlin, p. 93-132.
13. **Bobokhyan A.**, Gilibert A., Hnila P. 2013, Vishapakars/Dragon Stones: High-Altitude Monuments in Armenia and Problem of Their Protection, ICOMOS Heritage Conservation Regional Network Journal 3, (<http://rcchd.icomos.org.ge/?l=E&m=4-4>, retrieved 15.08.2024).
14. Gilibert A., **Bobokhyan A.**, Hnila P. 2013, Die armenischen višap, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt -

- Landesmuseum für Vorgeschichte 67, Halle, Deutscher Verlag der Wissenschaften, S. 195-205.
15. **Bobokhyan A.**, Gilibert A., Hnila P., Gasparyan B., Danielyan H. 2015, New Finds of Vishaps on the Southern Slopes of the Mountain Aragats, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies IX/2, Yerevan, p. 37-43.
  16. Von der Osten H., Hnila P., Gilibert A., **Bobokhyan A.** 2018, Integrated Archaeo - Geophysical Survey on Volcanic Terrain: The Case of Karmir Sar on Mount Aragats (Republic of Armenia), TÜBA-AR: Turkish Academy of Sciences Journal of Archaeology, Ankara, p. 197-206 (Web of Science/Scopus).
  17. **Bobokhyan A.**, Kunze R. 2021, Preliminary Archaeological Investigations in the Lake Sevan Region/Armenia, Praehistorische Zeitschrift 1, Berlin, p. 500-510 (Web of Science/Scopus).
  18. **Bobokhyan A.**, Martirosyan-Olshansky K. 2022, Transformation of a Sacred Landscape around Lake Gilli, Armenia, Backdirt: Annual Review of the Cotsen Institute of Archaeology at UCLA, December, p. 16-27.
  19. Avetisyan H., Gnuni A., Mkrtchyan L., **Bobokhyan A.** 2023, Armenian Standing Stones as an Object of Archaeological Study, in: Grekyan Y., Bobokhyan A. (ed.), Systemizing the Past: Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday, Oxford, Archaeopress Publishing, p. 6-21 (Web of Science/Scopus).
  20. Dan R., **Bobokhyan A.**, Gasparro O., Gasparyan B., Petrosyan A., Salvini M. 2023, The Archaeological Site of Garni, Armenia. Pre-Arsacid Archaeological Evidence and an Urartian Inscription of Argišti on a Vishap, in: Grekyan Y., Bobokhyan A. (ed.), Systemizing the Past: Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday, Oxford, Archaeopress, p. 56-78 (Web of Science/Scopus).
  21. Dalalyan T., Hovsepyan R., Abrahamian L., **Bobokhyan A.**, Gasparyan B. 2023, Water Management in Ancient Armenia: Problems and Perspectives, in: Grekyan Y., Bobokhyan A. (ed.), Systemizing the Past: Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday, Oxford, Archaeopress, p. 42-55 (Web of Science/Scopus).
  22. Hnila P., Gilibert A., **Bobokhyan A.** 2023, A Prehistoric Aggregated Cell Structure at 2850 m asl on Mount Aragats, Armenia, in: Grekyan Y., Bobokhyan A. (ed.), Systemizing the Past: Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday, Oxford, Archaeopress, p. 162-171 (Web of Science/Scopus).
  23. **Bobokhyan A.**, Iraeta-Orbegozo M., McColl H., Mkrtchyan R., Simonyan H., Ramos-Madrigal J., Andrades-Valtueña A., Hnila P., Gilibert A., Margaryan A. 2024, Burial of Two Closely Related Infants under a “Dragon Stone” from Prehistoric Armenia, Journal of Archaeological Science: Reports 57, p. 1-15 (Web of Science/Scopus).

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴԻՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ  
ԱՅԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**

24. **Բոբոխյան Ա.** 2014, Աղթիքի նորահայտ վիշապաքարը և Տայքի դերը Հայկական լեռնաշխարհի հնամշակութային զարգացումներում, Հաբիտուս. մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ I, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 252-260:
25. **Բոբոխյան Ա.**, Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. 2015, Վիշապաքարերի հնագիտություն, Պետրոսյան Ա., Բոբոխյան Ա. (խմբ.), Վիշապ քարակոթողներ, Երևան, «Գիտություն», էջ 269-396:
26. **Բոբոխյան Ա.** 2017, Խորենացու վկայությունը Պաղատի սրբազան տարածքի մասին և վիշապաքարերի խնդիրը, Արևելագիտությունը Հայաստանում 3, Երևան, էջ 32-51:
27. **Բոբոխյան Ա.** 2018, «Հնագետ» Ատրպետը կամ «Հայկական Շլիմանը», Ավետիսյան Հ. (խմբ.), Արագածի թիկունքում. հնագիտական հետազոտություններ՝ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 294-302:
28. **Բոբոխյան Ա.** 2018, Արագածի Տիրինկատար սրբավայրը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 1, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 290-301:
29. **Բոբոխյան Ա.** 2019, Ատրպետը՝ Տայքի հնությունների հետազոտող, Հակոբյան Զ., Ղարիբյան Ն., Ասրյան Ա. (խմբ.), Պատմական Տայք. պատմություն, մշակույթ, դավանանք, Ս. Էջմիածին, Մայր Աթոռի հրատ., էջ 32-42:
30. **Բոբոխյան Ա.** 2019, Հեքիաթից դեպի հնագիտություն, Բոբոխյան Ա., Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 8-32:
31. **Բոբոխյան Ա.** 2019, Կունտարա սրբավայրը և կունկունուցի քարը, Բոբոխյան Ա., Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. (խմբ.), Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 448-459:
32. **Բոբոխյան Ա.** 2019, Սեդրակ Բարխուդարյանը և վիշապաքարերի հետազոտությունը 1920-1930-ական թթ., Սարգսյան Գ., Հարությունյան Ա. (խմբ.), Սեդրակ Բարխուդարյան-120. գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 65-77:
33. **Բոբոխյան Ա.** 2019, Վիշապ կոթողներն՝ ըստ Ատրպետի արխիվային նյութերի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 3, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 8-20 :
34. **Բոբոխյան Ա.** 2021, Կաթքար-վիշապաքար. Երվանդ Լալայանից հարյուր տարի անց, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 4, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 20-35:
35. **Բոբոխյան Ա.** 2022, Արտանիշի վիշապաքարերը, Բադալյան Մ., Մարտիրոսյան-Օշանսկի Բ., Բոբոխյան Ա. (խմբ.), Ծովային Հայաստան. Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Երևան, էջ 162-180:

36. **Բոբոխյան Ա.** 2022, Գրիգոր Ղափանցյանի պետերբուրգյան մի գրությունը, Բաղայան Մ., Մարտիրոսյան-Օլջանսկի Բ., Բոբոխյան Ա. (խմբ.), Ծովային Հայաստան. Ուղտրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը, Երևան, էջ 465-467:
37. **Բոբոխյան Ա.** 2023, Ուղղահայաց գաղթեր. տարածության ընտելացման առանձնահատկությունները Հայկական լեռնաշխարհում, Գրեկյան Ե. (խմբ.), Միգրացիոն գործընթացները Հայկական լեռնաշխարհում հնագույն շրջանից մինչև 20-րդ դարասկիզբ, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 25-30:
38. Геворкян А., **Бобохян А.** 2015, Папира - бык - вишاپ, Петросян А., Бобохян А. (ред.), Каменные стелы вишапы, Ереван, «Гитутюн», с. 193-204.
39. **Bobokhyan A.**, Gillibert A., Hnila P. 2012, Vishaps of the Geghama Mountains: New Discoveries and Propedeutics to a History of Research, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies* VII/2, Yerevan, p. 7-27.
40. **Bobokhyan A.**, Gilibert A., Hnila P. 2015, Vishapakars: Current Approaches to Dating of Relief-Decorated Stone Stelae in Armenia, in: Işikli M., Can B. (ed.), *International Symposium on East Anatolia - South Caucasus Cultures*, 10-13 October 2012, Erzurum University, Cambridge, Scholars Publishing, p. 202-213.
41. **Bobokhyan A.** 2016, Round about the Eya Tree: Towards South Caucasian-Aegean Interactions in the 2<sup>nd</sup> Millennium BC, in: Narimanishvili G., Kvachadze M., Shanshashvili N. (ed.), *Aegean World and South Caucasus: Cultural Relations in the Bronze Age*, Tbilisi, Mtsignobari, p. 73-89.
42. **Bobokhyan A.**, Gilibert A., Hnila P. 2018, Karmir Sar: New Evidence on Dragon Stones and Ritual Landscapes on Mount Aragats, Armenia, in: Batmaz A., Bedianashvili G., Michalewicz A., Robinson A. (eds), *Context and Connection: Essays on the Archaeology of the Ancient Near East in Honour of Antonio Sagona*, *Orientalia Lovaniensia Analecta* 268, Leuven - Paris - Bristol, Peeters, p. 255-270.
43. **Bobokhyan A.**, Gilibert A., Hnila P. 2019, The Urartian God Quera and the Metamorphosis of the 'Vishap' Cult, in: Avetisyan P.S., Dan R., Grekyan Y.H. (ed.), *Over the Mountains and Far Away: Studies in Near Eastern History and Archaeology presented to Mirjo Salvini on the Occasion of His 80th Birthday*, Oxford, Archaeopress, p. 98-105.
44. Hnila P., Gilibert A., **Bobokhyan A.** 2019, Prehistoric Sacred Landscapes in the High Mountains: The Case of the Vishap Stelae between Taurus and Caucasus, in: Engels B., Huy S., Steitler Ch. (Hrsg.), *Natur und Kult in Anatolien*, *BYZAS* 24, Istanbul, Veröffentlichungen des Deutschen Archäologischen Instituts Istanbul, p. 283-302.
45. **Bobokhyan A.** 2020, "Excavating in the Archives": «Dragon Stones» around and Beyond the Lake Van, according to an Armenien Traveller, in: Blum S.W.E., Efe T., Kleinlin T.L., Pernicka E. (eds.), *From Past to Present. Studies in Memory of Manfred O. Korfmann*, *Studia Troica Monographien* 11, Bonn, Dr. Rudolf Habelt GBH, p. 47-67.



46. **Bobokhyan A.**, Gilibert A., Hnila P. 2020, The Place of “Dragon Stone” Sanctuaries in Context of Cultic Areas of Ancient Armenia, in: Otto A., Herles M., Kaniuth K. (ed.), Proceedings of the 11<sup>th</sup> International Congress on the Archaeology of the Ancient Near East 2 - Field Reports, Wiesbaden, Harrasowitz Verlag, p. 17-30.
47. Hovhannisyana A., Arakelyan D., von der Osten H., Hnila P., Gilibert A., Siradeghyan V., **Bobokhyan A.** 2020, ‘Looking for the Tombs of Dragons’: Preliminary Results of Archaeo-Geochemical Prospecting Studies at Tirinkatar - Karmir Sar Area, Southern Slopes of Mt Aragats, Armenia, Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies XIV/1-2, Oxford, p. 27-51.
48. Hovhannisyana A., **Bobokhyan A.**, Arakelyan D., Harutyunyan M., Siradeghyan V., Hnila P., Gilibert A. 2021, Dragons under Microscope: Determination and Identification of the Geological Sources of Vishap Stone Stelae, in: Avetisyan P., Bobokhyan A. (ed.), Archaeology of Armenia in Regional Context, Yerevan, IAE Publishing, p. 115-134.
49. **Bobokhyan A.** 2022, The Dragon Stones of Armenia, in: Harutyunyan Kh.A. (ed.), Historical and Cultural Heritage of Armenia, Yerevan, Hushardzan Press, p. 32-39.
50. **Bobokhyan A.** 2023, The Leopard in Middle Bronze Age Armenia and its Hittite Parallels, in: Grekyan E.H. (ed.), By God's Grace: Ancient Anatolian Studies Presented to Aram Kosyan on the Occasion of his 65th Birthday, Ancient Near Eastern Studies Supplement Series 61, Leuven, Peeters, p. 31-56.

## БОБОХЯН АРСЕН АЛЕКСАНДРОВИЧ

### КАМЕННЫЕ СТЕЛЫ «ВИШАПЫ» И ИХ АРХЕОЛОГИЧЕСКИЙ КОНТЕКСТ

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук  
по специальности 07.00.03 «Археология»

Защита состоится 19 декабря 2024 г. в 14:00 ч., на заседании  
специализированного  
совета 007 по археологии и этнографии КВОН, действующего при  
Институте археологии и этнографии НАН РА  
(адрес: 0025, г. Ереван, ул. Чаренца 15)

#### Резюме

В ходе исследования мы пришли к следующим выводам:

1. Историю исследований каменных изваяний, в народе называемых «вишапами» (рус. драконий камень), можно условно разделить на следующие этапы: 1. 1600-1908 гг., когда появились первичные данные об этих стелах, 2.

1909-1912 гг., когда стали проводиться первые научные исследования в данной области, 3. 1913-1920 гг., когда первые исследования получили отклик в научной среде, 4. 1921-1939 гг., когда изучение «вишапов» было поднято на серьезный научный уровень, 5. 1940-2010 гг., когда появились новые отдельные факты о «вишапах», 6. 2011-2023 гг., когда «вишапы» стали объектом систематических исследований. В основу данной диссертации легла новейшая работа, осуществленная Институтом археологии и этнографии Национальной академии наук РА, Свободным университетом Берлина и Университетом Ка' Фоскари Венеции, в результате которой были собраны полные данные о 115 «вишапах», локализованных на горных хребтах Арагац (36 единиц), Арегуни (5), Гегамы (43), Егнахах (2), Цахкуняц (5), Кенац (1), Севан (1), Сюник (5) и Варденис (17). Кроме того, использованы результаты раскопок недавно открытого памятника Тиринкатар на южных высотах Арагаца. 59 из упомянутых «вишапов» введены в обращение впервые. В результате этих исследований стало возможным дать определение феномену «вишапов».

2. «Вишапы» – обработанные со всех сторон круглые скульптуры с зооморфными мотивами, имеющие высоту ок. 110-550 см и изготовленные из твердого материала, преимущественно андезита и базальта.

3. Рассмотрение «вишапов» в системе мегалитического комплекса возможно лишь потому, что они представляют собой крупные камни и монолитны, а также в силу того, что они относятся к дописьменному периоду. Однако эти камни по своей обработке, иконографии, немногочисленности, расположению на определенной территории и социальной значимости в качестве ориентиров идентичности, несомненно, являются стелами-статуями.

4. Ни один из «вишапов» не повторяет другой, но они имеют общие морфологические и иконографические особенности, на основании которых мы типологизировали эти скульптуры по изображению, технике, стилю, форме и профилю. Три типа «вишапов» – с изображением быка, рыбы и их гибридов, имеют общие характеристики, которые позволяют рассматривать их как единое явление.

5. Для создания «вишапов» использован сдержанный и минималистический зооморфный стиль, основанный на воспроизведении не совсем пропорциональных изображений крупного рогатого скота и рыб. Также имеются отдельные изображения пар птиц и ограниченного количества объектов.

6. Анализ стилистических особенностей «вишапов» показывает, что мы имеем дело с центральным (Арагац, Гегамские горы) и окраинным (горы Арегуни, Егнахах, Цахкуняц, Кенац, Севан, Сюник) стилями изготовления этих изваяний. Можно говорить и о промежуточном стиле (Варденисские горы). Иконографические данные дают возможность анализировать и закономерности развития этих стилей. Таким образом, существование промежуточных, бесформенных стел без изображения, с частичным или едва заметным изображением, явствует об

архаическом стиле. Между тем стелы, напоминающие менгиры с фаллической верхушкой, изображающие стилизованную змею или козу, характеризующиеся антропоморфными элементами, могут указывать на поздний стиль.

7. Важная функция «вишапа» как изваяния – произвести впечатление, которое, помимо стилистических особенностей, существенно связано с круглой скульптурой и ее объемом. Как образцы минималистического искусства, «вишапы», благодаря отсутствию лишних украшений, становятся еще более загадочными.

8. Впечатление, однако, усиливается содержанием, которое скрыто под изображением. В этом смысле «вишапы» в целом, а особенно гибридные, многоголовые статуи и стелы с изображением птиц передают нарративы, связанные с идеей возрождения, размножения и поддержания жизненного цикла.

9. «Вишапы» особенно воспринимаемы в их первичной среде. С этой точки зрения принципы организации ландшафта «вишапов» соответствуют методам адаптации горного населения к местному рельефу. В частности, на Армянском нагорье существовало три уровня культурного ландшафта: равнинный, предгорный и высокогорный. «Вишапы» – памятники с высокой символической нагрузкой – относятся преимущественно к двум последним уровням культурных очагов.

10. «Вишапы» на территории Республики Армения были найдены поодиночке или группами, на изолированных и защищенных от ветра лугах. В обоих случаях создатели «вишапов» избегали поля видимости вдоль горной среды.

11. В ландшафте «вишапов» непременно присутствует несколько постоянных природных ориентиров, таких как гора, луг, озеро, источник воды.

12. В ландшафте «вишапов», рядом со статуями или вокруг них, встречаются различные памятники: гробницы, кромлехи, искусственные груды камней, дороги, «дома великанов»/башнеобразные структуры, круглые агломеративные поселения, ирригационные системы, менгиры, крепости, которые полностью или частично современны каменным изваяниям.

13. Кольбелью обсуждаемого феномена можно считать южные склоны Арагаца, характеризующиеся крупным скоплением архаичных «вишапов». Совершенные формы «вишапов» Арагаца появились и достигли пика развития в Гегамских горах, а промежуточные формы – в других регионах Армянского нагорья.

14. Данные материальной культуры и даты, установленные естественнонаучными методами, доказывают, что археологические контексты с «вишапами» можно отнести главным образом к эпохе средней и поздней бронзы (ок. XXII-XIII вв. до н.э.). Появление этих статуй, возможно, связано с резким наступлением засушливого климата в конце раннего и начале среднего бронзового века, что, возможно, и привело к экономическим и культурным изменениям, возникновению феномена «вишапов» и их размещению в горной местности, с обилием водных ресурсов. Однако вполне вероятно, что истоки «вишапов» вос-

ходят к периоду раннеземледельческих общин, когда группы людей впервые обосновались в высокогорье (конец VI тыс. до н.э. – вторая половина V тыс. до н.э.), осознавая его потенциал как с экономической, так и духовной точек зрения. Изваяния были опрокинуты в раннем железном веке (ок. XII-IX века до н.э.).

15. «Вишапы» были созданы общностями людей, живущих в одном и том же социальном пространстве и разделяющих одну и ту же систему ценностей, которые при помощи высеченных изваяний и связанных с ними повторяющихся праздников обогащали коллективную память и передавали информацию, относящуюся к главным событиям жизни этих общностей. Тот факт, что «вишапы» чаще всего встречаются в горных местностях и окружены другими типами памятников, дает основание предположить, что они преимущественно указывают на ключевые точки святилищ, легитимируя хозяйственные нужды древнейших общин, связанных с использованием высокогорных районов.

## **BOBOKHYAN ARSEN ALEXANDER**

### **"VISHAP" STONE STELAE AND THEIR ARCHAEOLOGICAL CONTEXT**

Dissertation for the degree of Doctor of History  
on the specialization “Archaeology” 07.00.03

The defense of the dissertation will be held on December 19, 2024, at 14:00 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of HESC by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA (address: 0025 Yerevan, 15 Charents st.)

### **Summary**

During the present study we came to the following conclusions:

1. The history of research on stone statues, popularly called "vishap" (Eng. for dragon stone), can be conditionally divided into the following main periods: 1. 1600-1908, when primary data on these stelae appeared, 2. 1909-1912, when the first scientific research in this area began, 3. 1913-1920, when the first investigations received a response in the scientific community, 4. 1921-1939, when the study of "vishaps" was raised to a serious scientific level, 5. 1940-2010, when new individual facts about "vishaps" appear, 6. 2011-2023, when "vishaps" became a subject for regular research by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA, Free University of Berlin and Ca' Foscari University of Venice. This dissertation is based on the latest work, which resulted in the collection of complete data on 115 "vishaps" located on mountains Aragats (36 units), Areguni (5), Geghama (43), Yeghnakhag (2), Tsaghkunyats (5), Kenats (1), Sevan (1), Syunik (5) and

Vardenis (17). In addition, the results of excavations of the recently discovered site of Tirinkatar on the southern heights of Aragats were used. 59 of the mentioned stelae are put into scientific circulation for the first time. As a result of the mentioned studies, it became possible to define the phenomenon of "vishaps".

2. "Vishaps" are round sculptures processed on all sides and decorated with zoomorphic motifs. They are ca. 110-550 cm high and are made of hard material, mainly andesite and basalt.

3. "Vishaps" can be considered in the system of the megalithic complex only because they are large monoliths, and also because they belong to the prehistoric period. However, these stones, in terms of their processing, iconography scarcity, location features, and social significance as identity shaping landmarks, undoubtedly can be considered stelae or statues.

4. None of the "vishaps" repeats the other in its details, but they have common morphological and iconographic features. Based on those we made typology of the sculptures by image, carving method, style, shape and profile. Three types of "vishaps" in the form of bull, fish and their hybrids, demonstrate common characteristics that allow us to consider them as a single phenomenon.

5. The "vishaps" are made in a restrained and minimalistic zoomorphic style, based on the reproduction of not quite proportional images of cattle and fish. There are also separate images of birds' pairs and a limited number of objects.

6. The analysis of the stylistic features of the "vishaps" shows that we deal with the central (Aragats, Geghama Mountains) and marginal (Areguni, Yegnahagh, Tsaghkunyats, Kenats, Sevan, Syunik Mountains) styles of sculpturing. It is possible also to talk about an intermediate style (Vardenis Mountains). Iconographic data make it possible to analyze the patterns of development of these styles. Thus, the existence of intermediate, shapeless stelae without images, or with a partial or barely noticeable images, suggests an archaic style. Meanwhile, stelae resembling menhirs with a phallic top, depicting a stylized snake and goat, or characterized by anthropomorphic elements, may indicate a later style.

7. The most important function of the "vishap" as a statue is to make an impression, which, in addition to stylistic features, is essentially related to the round sculpture and its volume. As examples of minimalistic art, "vishaps", due to the absence of excessive decorations, become even more mysterious.

8. The impression, however, is reinforced by the content hidden under the image. In this sense, the "vishaps" in general, and especially the hybrid and multi-headed ones as well as those with images of birds, convey narratives related to the idea of birth, reproduction and life cycle maintenance.

9. "Vishaps" are especially perceivable in their primary environment. From this point of view, the principles of organizing the landscape of the "vishaps" correspond to the ways of adaptation of the mountainous population to the local relief. In particular, there were three levels of the cultural landscapes in the Armenian Highland: low-

lands, foothills and highlands. "Vishaps", as high level symbolic objects, belong mainly to the last two levels.

10. In the territory of the Republic of Armenia "vishaps" were found alone or in groups, in isolated and wind-protected meadows. In both cases, the creators of the "vishaps" avoided visibility along the mountainous environment.

11. The landscape of "vishaps" necessarily includes several constant natural landmarks, such as mountain, meadow, lake and water source.

12. Within the landscape of "vishaps", near the statues or around them, there are various archaeological units: tombs, cromlechs, artificial stone piles, roads, "houses of giants"/tower-like constructions, aggregated cell structures, irrigation systems, menhirs, fortresses, which are completely or partially contemporary to the stone stelae.

13. The southern slopes of Aragats, characterized by a large concentration of "vishaps" and their archaism, can be considered the cradle of the discussed phenomenon. The perfect forms of "vishaps" of Aragats appeared and reached their peak of development in the Geghama Mountains, and intermediate forms – in other subzones of the Armenian Highland.

14. Evidence on material culture and dates obtained by scientific methods prove that contexts with "vishaps" can be attributed mainly to the Middle and Late Bronze Ages (ca. 22<sup>nd</sup>-13<sup>th</sup> centuries BC). The appearance of these monuments is possibly associated with the sharp onset of arid climate at the end of the Early Bronze Age and the beginning of the Middle Bronze Age, which may have led to economic and cultural transformations, the emergence of the phenomenon of "vishaps" and their placement in mountainous areas richer in water. However, it is likely that the origins of the "vishaps" go back to the early agricultural period, when groups of people first visited the highlands (late 6<sup>th</sup> millennium BC – second half of the 5<sup>th</sup> millennium BC), recognizing its potential both from an economic point of view and as a spiritual habitat. The toppling of the statues began in the Early Iron Age (ca. the 12<sup>th</sup>-9<sup>th</sup> centuries BC).

15. The "vishaps" were created by societies inhabiting similar landscapes and sharing the same value system, which, by means of the symbol of the processed sculptures and the recurring festivals associated with them, enriched the collective memory and transmitted information related to the major events in the life of those societies. The fact that the "vishaps" are most often located in mountainous areas and are surrounded by other types of archaeological objects gives reason to assume that they mainly mark key points of sanctuaries – legitimizing the economic needs of ancient communities concerning the use of high altitude zone resources.





